ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
(Հայարտոնագիր)

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 2 (18)

Патентное управление Республики Армения
(Армпатент)

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 2001 թվականի հունիսի 10-ից

Երեւան 2001

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 5, 105

Հայաստանի Հանրապետության օրենքը «Ֆիրմային անվանումների մասին» 7, 107

ԳՅՈՒՏԵՐ 13, 113

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 15, 115

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ 33, 131

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին 35, 133

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ 37

Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին 39

ՑՈՒՑԻՉՆԵՐ 93

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 97

ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ 134

Հրատարակվում է Հայարտոնագրի կողմից 1995թ.

Издается Армпатентом с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 ընդհանուր բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 общий отдел
Тел. 561-126 отдел информационных технологий

Internet:http://www.armpatent.org
E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5, 105
Закон Республики Армения “О Фирменных наименованиях”	7, 107
ИЗОБРЕТЕНИЯ	13, 113
Сведения о выданных патентах	15, 115
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	33, 131
Сведения о выданных патентах	35, 133
ТОВАРНЫЕ ЗНАКИ	37
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	39
УКАЗАТЕЛИ	93
СООБЩЕНИЯ	97
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	134

CONTENTS

LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS	
Law of the Republic of Armenia on Firm Name	
INVENTIONS	
Information on granted patents	
UTILITY MODELS	
Information on granted patents	
TRADE MARKS	
Information on registered trade marks and service marks	
INDEXES	
REPORTS	
TWO-LETTER CODES	

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
1999 թվականի նոյեմբերի 23-ին

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գլուխ I

Ընդհանուր դրույթներ

Հոդված 1. **Օրենքով կարգավորվող հարաբերությունները**

Սույն օրենքով կարգավորվում են իրավաբանական անձանց ֆիրմային անվանումների գրանցման, իրավական պահպանության եւ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Գլուխ II

Ֆիրմային անվանումներ

Հոդված 2. **Ֆիրմային անվանումը**

1. Ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո իրավաբանական անձն իրականացնում է իր գործունեությունը, եւ զանազանվում այլ իրավաբանական անձանցից:

2. Ֆիրմային անվանումը պետք է բովանդակի իրավաբանական անձի կազմակերպական - իրավական ձեւը բնորոշող բառեր եւ տարբերակող նշանակության գոնե մեկ հատուկ (անձնանուն, տեղանքի կամ խորհրդանշական անվանում) կամ հասարակ անուն:

3. Ֆիրմային անվանումը կարող է բովանդակել նաեւ իրավաբանական անձի գտնվելու վայրի անվանումը, նրա գործունեության բնույթը բնորոշող բառեր, ինչպես նաեւ այլ տվյալներ, որոնք նրա հիմնադիրները կամ մասնակիցները համարում են անհրաժեշտ:

4. Տնտեսական ընկերակցության ֆիրմային անվանումը պետք է պարունակի «լիակատար ընկերակցություն» կամ «վստահության վրա հիմնված ընկերակցություն» բառերը եւ ընկերակցության բոլոր մասնակիցների (լիակատար ընկերների) անունները (անվանումները) կամ ընկերակցության մասնակիցներից (լիակատար ընկերներից) առնվազն մեկի անունը (անվանումը)՝ ավելացրած «եւ ընկերներ» ու «լիակատար ընկերակցություն» կամ «վստահության վրա հիմնված ընկերակցություն» բառերը:

5.Առեւտրային կոոպերատիվի ֆիրմային անվանումը պետք է ցուցում պարունակի նրա գործունեության հիմնական նպատակի մասին:

Հոդված 3. **Ֆիրմային անվանման իրավական պահպանությունը**

Հայաստանի հանրապետությունում ֆիրմային անվանման իրավական պահպանությունն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով ֆիրմային անվանման գրանցման հիման վրա եւ առանց գրանցման՝ Հայաստանի հանրապետության միջազգային պայմանագրերի, սույն օրենքի եւ այլ օրենսդրական ակտերի համաձայն:

Հոդված 4. **Ֆիրմային անվանումներում թույլտվություն պահանջող անունների եւ անվանումների օգտագործումը**

1. Ֆիրմային անվանման մեջ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը կարող է օգտագործվել միայն այդ անձի կամ նրա ժառանգների համաձայնությամբ:

2. Եթե հանրահայտ անձը կամ նրա անվան օգտագործման համաձայնություն տվող ժառանգը գտնում է, որ իրավաբանական անձի գործունեությունը ստվերում է հանրահայտ անձի հեղինակությունը (վարկը), ապա նա կարող է դիմել դատարան՝ այդ անունը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու իրավունքից իրավաբանական անձին զրկելու եւ (կամ) պատճառած վնասները փոխհատուցելու հայցով:

3. Ֆիրմային անվանումների մեջ տարբերակող նշանակության անուններում «Հայ», «Հայաստան», «հայկական» բառերը եւ դրանց թարգմանությունները, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների անվանումները, ինչպես նաեւ ֆիրմային անվանումների մեջ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը՝ նրա մահվան եւ ժառանգներ չունենալու դեպքում, կարող են օգտագործվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Գլուխ III

Ֆիրմային անվանման գրանցումը եւ հաշվառումը

Հոդված 5. **Ֆիրմային անվանման գրանցման հայտը**

1. Մինչեւ առեւտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձի պետական գրանցումը, նրա ֆիրմային անվանումը պետք է գրանցվի Հայաստանի Հանրապետության արտոնագրային գերատեսչությունում (այսուհետ՝ գերատեսչություն):

2. Ֆիրմային անվանման ցանկացած փոփոխություն կատարվում է միայն նոր ֆիրմային անվանումը սույն օրենքով սահմանված կարգով գերատեսչությունում գրանցելուց հետո:

3. Ֆիրմային անվանման գրանցման հայտը (այսուհետ՝ հայտ) գերատեսչություն ներկայացնում են իրավաբանական անձի հիմնադիրները, նրանց կողմից լիազորված անձը կամ իրավաբանական անձի կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմինը (այսուհետ՝ հայտատու):

4. Հայտը կարող է ներկայացվել նաեւ հայտատուի կողմից լիազորված անձի միջոցով:

5. Հայտը պետք է պարունակի՝

ա) դիմում ֆիրմային անվանման գրանցման մասին, որի մեջ նշվում են գրանցման ներկայացված ֆիրմային անվանումը, դրա հապավումը կամ կրճատ ձեւը, եթե այդպիսիք կան, հայտատուի հասցեն.

բ) գրանցման ներկայացված ֆիրմային անվանման բացատրությունը, եթե այն հայերեն հասկանալի չէ:

6. Հայտին կցվում են՝

ա) համաձայնությունը (թույլտվությունը)՝ սույն օրենքի 4 հոդվածով նախատեսված դեպքերում.

բ) լիազորագիրը, եթե հայտը ներկայացվում է հայտատուի կողմից լիազորված անձի միջոցով.

գ) սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը:

7. Հայտը ներկայացվում է հայերեն:

8. Դիմումի ձեւը եւ լրացման կարգը սահմանում է գերատեսչությունը:

Հոդված 6. **Հայտի քննարկումը եւ ֆիրմային անվանման գրանցումը**

1. Գերատեսչությունը, հայտի ստացման օրվանից հնգօրյա ժամկետում, անցկացնում է փորձաքննություն եւ որոշում է հայտի եւ գրանցման ներկայացված ֆիրմային անվանման համապատասխանությունը սույն օրենքի պահանջներին:

2. Հայտի քննարկման ընթացքում, մինչեւ ֆիրմային անվանման գրանցման վերաբերյալ որոշման ընդունումը, հայտատուն կարող է փոփոխություններ կատարել ներկայացված հայտում: Այդ դեպքում սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետը հաշվարկվում է փոփոխությունը կատարելու օրվանից:

3. Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ ներկայացված ֆիրմային անվանումը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին, ապա որոշում է կայացվում ֆիրմային անվանման գրանցումը մերժելու վերաբերյալ, ինչի մասին, մերժման հիմնավորմամբ, եռօրյա ժամկետում ծանուցվում է հայտատուն:

4. Փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում, հայտատուն իրավունք ունի բողոք ներկայացնել գերատեսչության բողոքարկման խորհուրդ (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ):

5. Բողոքարկման խորհուրդը բողոքը քննարկում է գերատեսչության կողմից հաստատված կարգով:

6. Փորձաքննության որոշմանը կամ բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան:

7. Եթե ֆիրմային անվանումը համապատասխանում է սույն օրենքի պահանջներին, գերատեսչությունը որոշում է կայացնում այն գրանցելու մասին եւ եռօրյա ժամկետում ծանուցում է հայտատուին:

8. Ֆիրմային անվանումը գրանցելու մասին որոշումն ընդունելուց հետո, գերատեսչությունը ֆիրմային անվանումը գրանցում է ֆիրմային անվանումների գրանցման Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում:

9. Ֆիրմային անվանման գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը (այսուհետ՝ թվական) սահմանվում է հայտը գերատեսչություն ներկայացնելու թվականով:

10. Ֆիրմային անվանումը գրանցվում է հայերեն:

11. Պետական գրանցամատյանում գրանցվում է՝ ֆիրմային անվանումը, գրանցման համարը եւ թվականը, հայտի համարը, հայտատուի հասցեն:

12. Մինչեւ իրավաբանական անձի պետական գրանցումը, բայց ոչ ավելի, քան 6 ամիս, պետական գրանցամատյանում գրանցված ֆիրմային անվանումն ստանում է ժամանակավոր պահպանություն:

Հոդված 7. **Ֆիրմային անվանման գրանցումը մերժելու հիմքերը**

Որպես ֆիրմային անվանում գրանցման ենթակա չէ այն անվանումը, որը՝

ա) համընկնում է Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցված որեւէ իրավաբանական անձի ֆիրմային անվանմանը կամ ֆիրմային անվանման կամ ապրանքային եւ սպասարկման նշանի հրապարակային օգտագործման հետեւանքով որեւէ բնագավառում հասարակությանը հայտնի կամ համընդհանուր ճանաչում ստացած օտարերկրյա որեւէ իրավաբանական անձի ֆիրմային անվանմանը, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցման գործողություն ունեցող որեւէ ապրանքային կամ սպասարկման նշանի, ապրանքի ծագման տեղանվան, կամ շփոթելու աստիճան նման են դրանց եւ վերաբերում են գործունեության նույն ոլորտին.

բ) հակասում է հասարակության շահերին, մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին.

գ) որոշակի ապրանքի կամ ծառայության անվանում է կամ բնորոշում է դրանց որակը, հատկությունը, քանակը կամ արտադրության եղանակը, կամ գովազդում է դրանք.

դ) բովանդակում է Հայաստանի Հանրապետության պատմական կամ որեւէ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը եւ ներկայացվել է առանց այդ անվան օգտագործման համապատասխան թույլտվության.

ե) համընկնում կամ շփոթության աստիճան նման է որեւէ պետության, միջազգային կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպության անվանմանը:

Հոդված 8. **Գրանցված ֆիրմային անվանումների հաշվառումը**

1. Գրանցված ֆիրմային անվանումների հաշվառումն իրականացնում է գերատեսչությունը՝ Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի (այսուհետ՝ իրավաբանական անձանց գրանցող մարմին) տրամադրած տեղեկությունների հիման վրա:

2. Իրավաբանական անձանց գրանցող մարմինը եռամսյակը մեկ տեղեկություններ է տրամադրում գերատեսչությանը՝ տվյալ եռամսյակում գրանցված իրավաբանական անձանց, դրանց լուծարման, ինչպես նաեւ դրանց ֆիրմային անվանումների փոփոխությունների մասին կատարված գրառումների վերաբերյալ:

3. Տրամադրվող տեղեկությունները պետք է պարունակեն իրավաբանական անձի ֆիրմային անվանումը, պետական գրանցման համարը եւ թվականը, գտնվելու վայրը, իսկ լուծարման դեպքում՝ նաեւ իրավաբանական անձանց գրանցամատյանում այդ մասին գրառում կատարելու թվականը:

4. Ստացված տեղեկությունների հիման վրա գերատեսչությունը՝

ա) որոշում է կայացնում ֆիրմային անվանման վկայական տալու կամ դրա գրանցումը չեղյալ ճանաչելու մասին.

բ) համապատասխան գրառումներ է կատարում ֆիրմային անվանումների պետական գրանցամատյանում:

Հոդված 9. **Ֆիրմային անվանման գրանցման վկայագիրը**

1. Ֆիրմային անվանման վկայագիր տալու մասին որոշում կայացնելուց հետո, իրավաբանական անձի դիմումի համաձայն, գերատեսչությունը 10 օրվա ընթացքում նրան հանձնում է ֆիրմային անվանման գրանցման վկայագիրը:

2. Ֆիրմային անվանման գրանցման վկայագիրը հաստատում է ֆիրմային անվանման պետական գրանցման փաստը, ինչպես նաեւ իրավաբանական անձի՝ դրա օգտագործման բացառիկ իրավունքը:

3. Ֆիրմային անվանման գրանցման վկայագրի ձեւը եւ դրա մեջ նշվող տեղեկությունների ցանկը սահմանում է գերատեսչությունը:

4. Ֆիրմային անվանման գրանցումը գործում է անժամկետ:

Հոդված 10. **Ֆիրմային անվանումների գրանցման մասին տեղեկությունների հրապարակումը**

1. Ֆիրմային անվանումների գրանցման, ինչպես նաեւ սույն օրենքին համապատասխան ֆիրմային անվանումների պետական գրանցամատյանում կատարված բոլոր փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են գերատեսչության պաշտոնական տեղեկագրում:

2. Ֆիրմային անվանման պետական գրանցման մասին հրապարակվող տեղեկությունների լրիվ ցանկը սահմանում է գերատեսչությունը:

Գլուխ IV

Ֆիրմային անվանման օգտագործումը

Հոդված 11. **Ֆիրմային անվանման օգտագործումը**

1. Ֆիրմային անվանման օգտագործում է համարվում այդ անվանումով գործարքներ կատարելը, արտադրանքը տնտեսական շրջանառության մեջ մտցնելը, ապրանքներ եւ ծառայություններ գովազդելը, ֆինանսական գործառնություններ կատարելը, դատարանում հայց ներկայացնելը, ինչպես նաեւ ֆիրմային անվանման կիրառումը ապրանքների եւ դրանց փաթեթավորման, ցուցանակների, կնիքների, դրոշմակնիքների, ձեւաթղթերի, ազդագրերի վրա եւ օրենքով չարգելված այլ կիրառումը:

2. Իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանումներն օգտագործում են իրավաբանական անձի ֆիրմային անվանումը՝ ավելացնելով ստորաբաժանման գործունեության բնույթը բնորոշող բառեր կամ գտնվելու վայրի անվանումը:

3. Ֆիրմային անվանումն օգտագործվում է միայն այնպես, ինչպես այն գրանցված է պետական գրանցամատյանում:

4. Ֆիրմային անվանման հետ կարող են օգտագործվել նաեւ դրա օտարալեզու թարգմանությունները: Այդ դեպքում ֆիրմային անվանման մեջ պարունակվող տարբերակող նշանակության անունը չի թարգմանվում:

Հոդված 12. **Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը**

1. Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքն ուժի մեջ է մտնում իրավաբանական անձի պետական գրանցման օրվանից կամ գրանցված իրավաբանական անձի ֆիրմային անվանման փոփոխության մասին իրավաբանական անձանց գրանցամատյանում գրառում կատարելու օրվանից եւ գործում է Հայաստանի Հանրապետությունում նրանց գործունեության ողջ ընթացքում:

2. Օտարերկրյա իրավաբանական անձի ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետությունում տվյալ ֆիրմային անվանման կամ ապրանքային եւ սպասարկման նշանի հրապարակային օգտագործման հետեւանքով որեւէ բնագավառում հասարակությանը հայտնի դառնալու կամ համընդհանուր ճանաչում ստանալու փաստի հիման վրա եւ գործում է այդպիսի հետեվողական օգտագործման ողջ ընթացքում, եթե ֆիրմային անվանումը չի հակասում սույն օրենքով սահմանված ֆիրմային անվանումների գրանցման պայմաններին:

3. Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքի խախտում է համարվում պահպանվող ֆիրմային անվանմանը նույնական կամ շփոթելու աստիճան նման անվանման օգտագործումն այլ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից:

4. Իրավաբանական անձի ֆիրմային անվանումն այլ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից ապօրինի օգտագործելու, այդ թվում՝ տվյալ ֆիրմային անվանմամբ նրանց կողմից իրավունքներ եւ պարտականություններ ձեռք բերելու դեպքում, իրավաբանական անձն իր իրավունքները կարող է պաշտպանել դատական կարգով:

5. Իրավաբանական անձի ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը կարող է փոխանցվել միայն տվյալ իրավաբանական անձի հետ մեկտեղ՝ դրա վերակազմակերպման դեպքում:

Հոդված 13. **Ֆիրմային անվանման գրանցման գործողության դադարեցումը**

1. Ֆիրմային անվանման գրանցման գործողությունը դադարեցվում է, եւ իրավաբանական անձը զրկվում է Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքից, եթե՝

ա) օրենքով սահմանված դեպքերում դա-

տարանի որոշմամբ նրան արգելվել է օգտագործել տվյալ ֆիրմային անվանումը.

բ) օրենքով սահմանված դեպքերում դատարանն անվավեր է ճանաչել ֆիրմային անվանման գրանցումը.

գ) իրավաբանական անձը փոխել է իր ֆիրմային անվանումը.

դ) իրավաբանական անձը լուծարվել է:

2. Հայաստանի Հանրապետության դատարանները ծանուցում են գերատեսչությանը ֆիրմային անվանումների վերաբերյալ որոշումների մասին:

3. Գերատեսչությունը ֆիրմային անվանումների վերաբերյալ դատարանների որոշումների հիման վրա համապատասխան փոփոխություններ է կատարում պետական գրանցամատյանում:

4. Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքից իրավաբանական անձի զրկվելու դեպքում տվյալ անվանումը որպես այլ իրավաբանական անձի ֆիրմային անվանում կարող է գրանցվել ոչ շուտ, քան երեք տարի հետո:

Գլուխ V

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 14. **Տուրքերը**

Ֆիրմային անվանման գրանցման եւ իրավական պահպանության հետ կապված գործողությունների համար գանձվում են պետական տուրքեր, որոնց տեսակները, չափերը եւ վճարման կարգը սահմանվում են օրենքով:

Հոդված 15. **Ֆիրմային անվանումների հետ կապված վեճերի լուծումը**

Ֆիրմային անվանումների գրանցման եւ օգտագործման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

Հոդված 16. **Պատասխանատվությունը ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը խախտելու համար**

1. Ֆիրմային անվանման օգտագործման՝ իրավաբանական անձի բացառիկ իրավունքը խախտելու դեպքում նրան պատճառված վնասը պետք է փոխհատուցվի խախտողի կողմից.

2. Վնաս կրած իրավաբանական անձի հեղինակությունը (վարկը) վերականգնելու նպատակով, գերատեսչությունն իր պաշտոնական տեղեկագրում, խախտողի հաշվին, տեղեկություն է հրապարակում դատարանի համապատասխան որոշման մասին, նշելով նաեւ, թե ում է պատկանում խախտված իրավունքը:

3. Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը խախտելու դեպքում, խախտողի կողմից պատրաստված ֆիրմային անվանմամբ ցուցանակները, կնիքները, դրոշմակնիքները, ձեւաթղթերը, ազդագրերը եւ այլ տպագրական հրատարակությունները ենթակա են ոչնչացման:

Հոդված 17. **Միջազգային պայմնագրերը**

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 18. **Անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո իրավաբանական անձանց նախկինում գրանցված ֆիրմային անվանումների գրանցման գործողությունը մնում է ուժի մեջ:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո իրավաբանական անձանց չգրանցված ֆիրմային անվանումները սույն օրենքով սահմանված կարգով ենթակա են գրանցման՝ մինչեւ իրավաբանական անձի ընթացիկ գրանցումը:

3 Ուժը կորցրած ճանաչել 1997թ. մայիսի 12-ին ընդունված «Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ
Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

Երեւան
15 դեկտեմբերի 1999թ.
ՀՕ-20

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

111 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
A1 Գյուտի հիմնական արտոնագիր
A2 Գյուտի նախնական արտոնագիր
B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24 արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
41 հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44 գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45 գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 գյուտի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65 հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71 հայտատուն, երկրի կոդը
72 գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51)[7] **A01G 27/00** (11) **931** (13) **A2**
A01G 25/00
(21) P 20000061 (22) 04.07.2000
(41) 22.09.2000
(72) Ստեփան Մարգարյան (AM), Մայիս Սանոյան (AM), Արմեն Մարգարյան (AM)
(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)
(54) **Կենսահումուսի հումքի խոնավացման ռեժիմի կառավարման եղանակ եւ ավտոմատ սարք**
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես մելիորացիային:

Կենսահումուսի հումքի խոնավացման ռեժիմի կառավարման եղանակը հիմնված է ագրոօդերեւութաբանական պարամետրերի օգտագործման վրա: Գյուտի համաձայն հաշվում են գումարային տեղումների եւ գոլորշիացման տարբերության ինտեգրալը, որն իրենից ներկայացնում է հումքի փաստացի խոնավությունը, եւ համեմատում ստացված մեծությունը նախօրոք տրված մեծության հետ, որը համապատասխանում է նախաջրման արժեքին, իսկ ոռոգման ժամկետի որոշումը կատարում են, կախված համեմատական արդյունքից:

Կենսահումուսի հումքի խոնավացման ռեժիմի կառավարման սարքը բաղկացած է մուտքային տվիչներից, գումարային տեղումների մակարդակաչափից, հաշվեկշռաչափից, ինտեգրատորից եւ ոռոգման ժամկետի որոշման ինդիկատորից, որի ելքը միացված է աստիճանավորված ցուցնակ ունեցող ինդիկատորին: Վերջինիս ցուցնակով որոշվում է հումքի նախաջրման խոնավությունը եւ տրվում ոռոգման հրահանգ:

Եղանակն ապահովում է կենսահումուսի հումքի ոռոգման ժամկետների կանխորոշում եւ ռեժիմի կառավարում, սարքի պարզեցում եւ հուսալիության բարձրացում: 2 նկ.:

---

(51)[7] **A01M 1/00** (11) **932** (13) **A2**
(21) P20000046 (22) 29.05.2000
(41) 22.09.2000
(72) Հովհաննես Նաղաշյան (AM), Հեկտոր Հարությունյան (AM), Վալերի Գրիգորյան (AM)
(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)
(54) **Տզահան ունելի**
(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, հատկապես կենդանիների վերնամաշկային շերտից արտաքին մակաբույծները՝ արոտավայրային տզերը պոկելու սարքերին:

Ունելին ունի երկու զսպանակած ճյուղեր: Յուրաքանչյուր ճյուղի ծայրը շերեփաձեւ է եւ ունի կտուցաձեւ ելուստ: Ելուստի ներքին մակերեւույթը կոնաձեւ է եւ հաղորդակցվում է շերեփի խոռոչի հետ:

Ունելու կառուցվածքը թույլ է տալիս հեռացվող տզի կնճիթիկը ցեմենտող նյութի հետ միասին սեւեռել կտուցաձեւ ելուստի, իսկ մարմինը՝ շերեփի խոռոչում: 3 նկ.:

---

(51)[7] **A01N 25/00** (11) **933** (13) **A2**
(21) 98047 (22) 09.06.1998
(31) 08/874,116 (32) 12.06.1997 (33) US
(41) 08.08.2000
(72) Ուիլյամ Ռեյկֆիլդ Վուդ (GB), Սալվատոր Ջոն Կուչչա (US), Մայքլ Ֆրենկ Թրիսի (US)
(71) Ամերիքն Ցիանամիդ Քամփնի (US)
(73) Ամերիքն Ցիանամիդ Քամփնի (US)
(74) Է. Նահապետյան
(54) **Տզերի մնացորդների ոչնչացումը բարելավելու եղանակ, տզերով վարակումից բույսերի երկարաձգված պաշտպանության եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ տզերի վարակումից պտղատու բույսերի եւ գյուղատնտեսական մշակաբույսերի պաշտպանությանը:

Տզերով վարակմանը ենթակա բույսերի տերեւները մշակում են 4,6-երկ(արիլօքսի)պիրիմիդինային ոչ համաչափ (ոչ սիմետրիկ) միացությունով: Պիրիմիդինային համաչափ (սիմետրիկ) միացության համեմատ, առաջարկվող միացությունը առավել արդյունավետ է տզերի, հատկապես խոտակեր տզերի, մնացորդների ոչնչացման համար:

Գյուտը ապահովում է տզերի մնացորդների արդյունավետ ոչնչացումը եւ տզերի վարակումից բույսերի պաշտպանության երկարաձգումը: 2 անկախ կետ:

---

(51)[7] **A01N 43/00** (11) **934** (13) **A2**
(21) 98042 (22) 20.05.1998
(31) 08/866,772 (32) 30.05.1997 (33) US
(41) 08.08.2000
(72) Թոմաս Մայեր (DE), Ստեֆան Շայբլիխ (DE), Հելմուտ Ջիգֆրիդ Բալթռուշաթ (DE)

(71) Ամերիքն Ցիանամիդ Քամփնի (US)
(73) Ամերիքն Ցիանամիդ Քամփնի (US)
(74) Է. Նահապետյան
(54) **Հերբիցիդային 3,5-երկֆտորպիրիդիններ**
(57) Գյուտը վերաբերում է եռտեղակալված 3,5-երկֆտորպիրիդիններին, այդ միացությունները պարունակող հերբիցիդային բաղադրանյութերին, դրանց ստացման եղանակներին եւ այդ միացությունների կիրառմանը՝ բույսերի անցանկալի աճի դեմ պայքարելու համար:

Նշված միացություններն ունեն ընդհանուր բանաձեւ՝

եւ ապահովում են հերբիցիդային բարձր ակտիվություն ու հողում քայքայվելու բարձր ունակություն: 7 անկախ կետ:

---

(51)[7] **A01N 43/36** (11) **935** (13) **A1**
(21) 97066 (22) 01.08.1997
(31) 08/691.478 (32) 02.08.1996 (33) US
(72) Սիմի Ցիի–Փեյ Չոու Շաաֆ (US), Ստիվեն Բրանտ (GB), Ջիան Ջեյմս Քսու (US), Էնդրյու Էվելին Գոլդսմիթ (GB), Էնտոնի Ֆրենսիզ Ուոլկեր (GB), Պատրիկ Չարլզ Մաուերի (US), Էդվարդ Ս. Դոնոհյու (US), Արինիվասան Ռաջան (US)
(71) Ամերիքն Ցիանամիդ Քամփնի (US)
(73) Ամերիքն Ցիանամիդ Քամփնի (US)
(74) Հ. Դավթյան
(54) **Կայուն արիլպիրոլային մասնիկների ստացման եղանակ, կայուն արիլպիրոլային մասնիկներ,դրանք պարունակող կախույթային խտանյութի բաղադրանյութ**
(57) Գյուտը վերաբերում է թունաքիմիկատների արտադրությանը, մասնավորապես կայուն արիլպիրոլային մասնիկների ստացման եղանակներին, ինչպես նաեւ դրանք պարունակող բաղադրանյութերին:

Եղանակը կազմված է արիլպիրոլային մասնիկներ, դիսպերսարար եւ ջուր պարունակող խառնուրդի ստացման, 25-80°C ջերմաստիճանում խառնուրդի հասունացման եւ հասունացած խառնուրդի մանրացման եւ կայուն արիլպիրոլային մասնիկների ստացման փուլերից:

Բաղադրանյութը պարունակում է 10-50% արիլպիրոլային մասնիկներ, 0.1-2% դիսպերսարար, 0.5-5% կայունարար, 0.1-1% կախույթացնող նյութ, 0.01-0.5% թանձրացուցիչ, 5-15% հակասառիչ, մոտ 1% փրփրամարիչ, մինչեւ մոտ 0.5% կոնսերվանտ եւ ջուր: 5 անկախ կետ, 2 նկ.:

---

(51)[7] **A23B 7/00** (11) **936** (13) **A2**
(21) P20000092 (22) 04.10.2000
(41) 20.11.2000
(72) Վահրամ Պողոսյան (AM)
(71) Վահրամ Պողոսյան (AM)
(73) Վահրամ Պողոսյան, Երեւան, Գայդարի 6, բն. 49 (AM)
(54) **Բանջարեղենի պահածոյացման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես բանջարեղենի պահածոյացմանը:

Թարմ բանջարեղենը նախապատրաստում են, կտրատում, տեղադրում նախապատրաստված տարաների մեջ, ավելացնում պահածոյացնող նյութ՝ տարայի 1/3 մասով, տարան ծածկում են կափարիչով, տեղադրում եռացող ջրի մեջ եւ պահում 8-15 րոպե, այնուհետեւ տարան լրիվ լրացնում են եռացող պահածոյացնող նյութով, փակում կափարիչով եւ սառեցնում: Որպես պահածոյացնող նյութ օգտագործում են տոմատի խյուս կամ տոմատի հյութ:

Բարձրանում է պահածոյացված բանջարեղենի համի հատկությունը, պարզեցվում է ստացման տեխնոլոգիան:

---

(51)[7] **A23N 12/08** (11) **937** (13) **A2**
(21) P20000074 (22) 07.08.2000
(41) 20.10.2000
(72) Գեղամ Սնապյան (AM)
(71) Գեղամ Սնապյան (AM)
(73) Գեղամ Սնապյան, Երեւան, Էրեբունի 11, բն. 37 (AM)
(54) **Համակցված չորանոցային սարք**
(57) Գյուտը վերաբերում է սննդային մեքենաշինությանը, մասնավորապես խոնավ հումքի, ներառյալ գյուղատնտեսական հումքի ջրազրկման, չորացման սարքերին:

Սարքը բաղկացած է արեւային օդատաքացուցիչից, չորացման խցից /երկու բաժանմունքով/, որում տեղադրված ջերմափոխանակիչներն ունեն լրացուցիչ էներգասնուցման հնարավորություն, եւ արեւային ջերմակուտակիչից:

Ջերմակուտակիչի էներգիան օգտագործվում է հիմնականում գիշերային ժամերին եւ եղանակի կարճատեւ անբարենպաստ լինելու դեպքում, իսկ էներգիայի լրացուցիչ աղբյուրը գործարկվում է, որպեսզի չորացնող օդի ջերմաստիճանը պահպանվի անհրաժեշտ մակարդակի վրա, երբ արեւային էներգիան չի բավականացնում, կամ եղանակի երկարատեւ անբարենպաստ պայմանների դեպքում: Հումքի հավասարաչափ ջրազրկումն ըստ չորանոցային խցի բարձրության ապահովելու համար սարքում նախատեսված է տաք օդի հավասարաչափ բաշխման համակարգ:

Հումքի ջրազրկումը կատարվում է հիմնականում արեւային էներգիայի միջոցով: 6 նկ.:

---

(51)[7] **A23N 17/00** (11) **938** (13) **A2**
(21) 99129 (22) 20.12.1999
(41) 08.08.2000
(72) Լեոնիդ Հախումյան (AM), Կարինե Մանուկյան (AM), Ինգա Հախումյան (AM), Արամ Հախումյան (AM), Արմեն Վանյան (AM)
(71) Լեոնիդ Հախումյան (AM), Կարինե Մանուկյան (AM), Ինգա Հախումյան (AM), Արամ Հախումյան (AM), Արմեն Վանյան (AM)
(73) Լեոնիդ Հախումյան, Երեւան, Հանրապետության 62, բն. 139 (AM), Կարինե Մանուկյան, Երեւան, Հանրապետության 62, բն. 139 (AM), Ինգա Հախումյան, Երեւան, Հանրապետության 62, բն. 139 (AM), Արամ Հախումյան, Երեւան, Հանրապետության 62, բն. 139 (AM), Արմեն Վանյան, Երեւան, Մաշտոցի 5բ, բն. 6 (AM)
(54) **Կերակրային եւ կերային մթերքների էլեկտրահիդրոջերմային մշակման սարք**
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինության բնագավառին, մասնավորապես՝ կերակրային եւ կերային մթերքների մշակման սարքերին:

Սարքն ունի փոխադրիչի կողերի երկայնքով տեղադրված, բաժնավորիչ պոմպին միացված եւ դիէլեկտրիկ նյութից պատրաստված խցիկներ, որոնց աշխատանքային մակերեւույթներն ունեն հավասարաչափ բաշխված անցքեր: Խցիկների խոռոչում տեղադրված են էլեկտրական կաբելի հետ կապված էլեկտրոդներ:

Ապահովվում է սարքի աշխատանքի բարձր հուսալիությունը: 1 նկ.:

---

(51)[7] **A24F15/04** (11) **939** (13) **A2**
(21) P20000020 (22) 29.03.2000
(41) 08.08.2000
(72) Ժիրայր Մնացականյան (AM)
(71) Ժիրայր Մնացականյան (AM)
(73) Ժիրայր Մնացականյան, Երեւան, Բաշինջաղյան 2-րդ նրբ. 2, բն.9 (AM)
(54) **Ծխախոտատուփ**
(57) Գյուտը վերաբերում է գլանակների հատ-հատ մատուցման մեխանիզմով ծխախոտատուփերին:

Ծխախոտատուփի կողաճակատին ամրակցված է գլանակների մատուցման մեխանիզմ, որը հպված է անշարժ միջնորմին: Ծխախոտատուփի վերին ճակատին, այդ մեխանիզմին կից կա գլանակների մատուցման համար նախատեսված անցք: Անշարժ միջնորմն ունի գլանակներին համապատասխան գոգավորություն եւ միջանցիկ փորվածք: Ծխախոտատուփի հակառակ կողաճակատին ամրակցված է գլանակների կողմնային տեղաշարժման մեխանիզմ: Այդ մեխանիզմն ունի կենտրոններում հոդակապորեն միակցված երկու լծակ, որոնցից յուրաքանչյուրի մեկ ծայրը ռետինաթելով կառչած է տուփի կողաճակատին, իսկ մյուսը սահելու հնարավորությամբ հենված է շարժուն միջնորմին, որն ունի գլանակներին համապատասխան գոգավորություն: Լծակները միակողմանի հրում են շարժուն միջնորմը, որն իր հերթին հրում է գլանակները: Գլանակների դեպի դուրս տեղաշարժման մեխանիզմն ունի զսպանակված կոճակ: Կոճակի վզիկին ամրացված է գլանակին հպվող ռետինապատ բարձիկ:

Ծխախոտատուփի կառուցվածքը թույլ է տալիս գլանակները հատ-հատ հանելիս խուսափել դրանց դեֆորմացիայից: 8 նկ.:

---

(51)[7] **A41H 1/00** (11) **940** (13) **A2**
G01B 3/02
(21) P20000039 (22) 04.05.2000
(41) 22.09.2000
(72) Արմինե Ասատրյան (AM), Ջոն Ասատրյան (AM)
(71) Արմինե Ասատրյան (AM), Ջոն Ասատրյան (AM)
(73) Արմինե Ասատրյան, Գյումրի, Մ. Խորենացու 26, բն. 27 (AM), Ջոն Ասատրյան, Գյումրի, Մ. Խորենացու 24, բն. 4 (AM)
(54) **Ձողագործիք**
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը եւ նախատեսված է ոտքի եւ ձեռքի մատների մարդաչափական հետազոտություններ կատարելու համար:

Ձողագործիքը բաղկացած է երկու շարժուն ճշտասանդղակով քանոններից, որոնք ճկուն են եւ ճկուն կապով միացված են միմյանց, քանոնների միջեւ տեղակայված է սողան, որն իր ակոսներով ընդգրկում է քանոնները, իսկ սողանի ստորին մակերեւույթը կիսագլանաձեւ է: 5 նկ.:

---

(51)[7] **A47C 11/00** (11) **941** (13) **A2**
(21) P20000047 (22) 01.06.2000
(41) 22.09.2000
(72) Գագիկ Կարապետյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Ստեփան Կոստանյան (AM)
(71) Գագիկ Կարապետյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Ստեփան Կոստանյան (AM)
(73) Գագիկ Կարապետյան, Երեւան, Բաշինջաղյան 121 (AM), Վիկտոր Մակարյան, Երեւան, Բաբայան 28, բն. 29 (AM), Ստեփան Կոստանյան, Երեւան, Միքայելյան 80, բն. 12 (AM)
(54) **Ձեռքի գորգագործական հաստոցին կից նստելու սարք**
(57) Նստելու սարքն ունի հիմք, որի վրա լծակահոդակապավոր հենարանների միջոցով տեղակայված է նստարանը: Նստարանն ունի երկայնական ուղղորդիչ տարրեր, որոնց վրա տեղադրված են առնվազն երկու նստոց: Լծակահոդակապավոր հենարանները մանեկների միջոցով կապված են աջ եւ ձախ պարուրակներով ուղղորդիչ պտուտակի հետ, որի յուրաքանչյուր ծայրին կա արգելուկավոր մեխանիզմ եւ դրան միացված բռնակ, որի միջոցով փոփոխում են նստարանի դիրքն ըստ բարձրության:

Նստոցների դիրքի հորիզոնական հարթությունում եւ ըստ բարձրության կարգավորման շնորհիվ ստեղծվում է գործագործների համար հարմարավետ աշխատանքային տեղ: 2 նկ.:

---

(51)[7] **A61B 17/56** (11) **942** (13) **A2**
(21) P 20000044 (22) 22.05.2000
(41) 22.09.2000
(72) Ռոբերտ Գաբոյան (AM)
(71) Ռոբերտ Գաբոյան (AM)
(73) Ռոբերտ Գաբոյան, Երեւան, Գայդարի 6, բն. 13 (AM)
(54) **Ողնաշարի հետին ամրացման եղանակ ողերի մարմինների սեղմումային կոտրվածքների դեպքում**
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ նյարդավիրաբուժությանը:

Ողնաշարի հետին ամրացումից եւ տեղաշարժված ողերի ուղղումից հետո ողերի հեռացված փշային ելունների եւ աղեղների փոխարեն տեղադրում են օրգանական ապակուց (պոլիմետիլմետակրիլատ) պատրաստված թիթեղիկ, որը ջերմային ազդեցությամբ ձեւավորում են՝ տալով նրան վնասված մասի անատոմիական ձեւը, որը եւ պահպանվում է հովացումից հետո: Թիթեղիկին ընդլայնական հատույթում տրվում է կիսագոգավոր ձեւ, որպեսզի պահպանվի ողնաշարային խողովակի ամբողջականությունը եւ ձեւը:

Թիթեղիկի երկու ծայրերին արվում են փորակներ, որոնք կիպ ընդգրկում են չվնասված ողերի փշաձեւ ելունները:Թիթեղիկի լայնքը 4 սմ է, իսկ երկարությունը՝ վնասված մասից 3-4 մմ երկար:

Պահպանված փշաձեւ ելունների միջեւ թիթեղիկը տեղադրելուց եւ ողնաշարային խողովակի վերականգնումից հետո, թիթեղիկը տանտալե մետաղալարով կիպ ամրացնում են հարեւան՝ չվնասված ողերի փշաձեւ ելուններին եւ աղեղներին:

Պարզեցվում եւ էժանացվում է ողնաշարի կոտրվածքների վիրահատությունը, նվազեցվում վնասվածքայնությունը: 3 նկ.:

---

(57)[7] **A61B 17/58** (11) **943** (13) **A2**
(21) 97117 (22) 29.12.1997
(41) 08.08.2000
(72) Վաչագան Այվազյան (AM), Գագիկ Թումյան (AM), Արթուր Սոխակյան (AM)
(71) Վաչագան Այվազյան (AM), Գագիկ Թումյան (AM), Արթուր Սոխակյան (AM)
(73) Վաչագան Այվազյան, Երեւան, Թումանյան 1, բն. 10 (AM), Գագիկ Թումյան, Երեւան, Արամի նրբ. 26/3 (AM), Արթուր Սոխակյան, Երեւան, Բաշինջաղյան 171/1, բն. 45 (AM)
(54) **Հարթակ սրունքի ոսկրերի դիստալ հատվածի օստեոսինթեզի համար**
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես վնասվածքաբանությանը:

Հարթակն ունի երկու տարբեր երկարության զուգահեռ կեռեր՝ ոսկրի դիստալ հատվածի, եւ անցքեր՝ պտուտակների համար:

Հարթակը ապահովում է դիստալ բեկորի հուսալի սեւեռակումը եւ բացառում լրացուցիչ արտաքին անշարժացման անհրաժեշտությունը: 3 նկ.:

---

(51)[7] **A61B 17/58** (11) **944** (13) **A2**
(21) P20000114 (22) 30.11.2000
(41) 20.12.2000
(72) Արմենակ Ռաֆայելյան (AM)
(71) Արմենակ Ռաֆայելյան (AM)
(73) Արմենակ Ռաֆայելյան, Երեւան, Աղայան 9, բն. 29 (AM)
(54) **Արտաքին օստեոսինթեզի համադրման ապարատ**
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես վնասվածքաբանությանը:

Արտաքին օստեոսինթեզի համադրման ապարատը բաղկացած է պարուրակավոր մետաղաձողերից, ֆունկցիոնալ հանգույցներից, որոնք կազմված են կարգավորվող տարրերից, մեկ եւ երկակի գլխիկով ձողաբռնիչներից, որոնց գլխիկների մեջ ամրացվում են ներոսկրային մետաղաձողերը, ռոտացիոն հանգույցից, որը կազմված է 120° բացվածքով երկու մետաղահարթակային աղեղներից, որոնցից յուրաքանչյուրի վրա արված են մեկ երկար եւ մի քանի կարճ փորակներ, ընդ որում մետաղահարթակային աղեղները միացված են իրար պտուտակավոր մետաղաձողերով, համադրող ձողային սեւեռիչից, որը կազմված է պարուրակավոր ձողից, կարգավորվող տարրերից, սեւեռապնդիչ եւ կարգավորիչ մանեկներից եւ տեղադրված է երկու մետաղահարթակային աղեղները կապող պտուտակավոր մետաղաձողերի վրա մետաղահարթակային աղեղների միջեւ:

Ոսկրաբեկորների երկայնական եւ պտտական տեղաշարժի վերացումը, ինչպես նաեւ սեղմումը եւ ձգումը իրագործվում է համապատասխան մանեկներով: Ոսկրաբեկորների անկյունային տեղաշարժը վերացվում է համադրող սեւեռիչի միջոցով: Ապահովվում է ոսկրաբեկորների սեւեռման կոշտությունն ու ճշգրտությունը, պտտական համադրման հեշտությունը եւ բարդ շտկման մանիպուլյացիաները հետվիրահատական շրջանում: 6 նկ.:

---

(51)[7] **A61D 01/06** (11) **945** (13) **A2**
(21) 99117 (22) 15.06.1999
(41) 08.08.2000
(72) Հեկտոր Հարությունյան (AM), Ալբերտ Վարդանյան (AM), Սամվել Երեմյան (AM), Սամվել Օհանջանյան (AM), Հովհաննես Այդինյան (AM)
(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)

(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)

(54) **Ամորձատման ունելի**

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ վիրաբուժական գործիքներին:

Ամորձատման ունելին բաղկացած է իրանից, որն ունի անշարժ շուրթ, երկու բլթանցք, բռնակ: Գործիքն ունի նաեւ շարժական շուրթ: Անշարժ եւ շարժական շուրթերի վրա փորված է ակոս: Շարժական շուրթն ունի ատամնաձող, որը կառչման մեջ է բռնակ ունեցող ատամնավոր սեկտորի հետ: Սեկտորի պտտման առանցքը անցնում է բլթանցքերով: Սեկտորի բռնակը պտտելիս շարժական շուրթը մոտենում է անշարժ շուրթին, եւ կատարվում է ամորձիների անոթների պարասեղմում: Անոթների պարասեղմումը կարգավորելու համար գործիքն ունի կարգավորվող հենակ:

Բարձրանում է աշխատանքի հարմարավետությունը եւ ամորձատման հուսալիությունը: 3 նկ.:

---

(51)[7] **A61F 2/06** (11) **946** (13) **A1**
A61M 29/02
(21) 97099 (22) 30.10.1997
(31) 08/742,422 (32) 30.10.1996 (33) US
(65) 803 A2
(72) Յակոբ Ռիխտեր (IL), Իռա Յարոն (IL)
(71) Մեդինոլ Լթդ. (IL)
(73) Մեդինոլ Լթդ. (IL)
(74) Հ. Դավթյան

(54) **Ստենտ, դրա պատրաստման թերթ եւ ստենտի պատրաստման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես, ստենտներին եւ դրանց պատրաստման եղանակներին:

Մետաղյա հարթ թերթի վրա կտրում են ստենտի նախշանկարները, օրինակ՝ փորագրության, լազերի կամ այլ եղանակով: Թերթը ոլորում են՝ միակցելով նախշանկարի հակադիր կողմերը, օրինակ՝ կետահպումային եռակցումով, եւ հղկում մեխանիկական կամ էլեկտրամեխանիկական եղանակով:

Առաջարկված են ստենտի տարբեր կառուցվածքներ, բարակ մետաղյա թերթի վրա նախշանկարների կտրման եղանակներ: 8 անկախ կետ, 27 նկ.:

---

(51)[7] **A61F 5/00** (11) **947** (13) **A2**
(21) 99109 (22) 19.10.1999
(41) 20.11.2000
(72) Դանտես Կեւեյան (AM), Խաչիկ Կեւեյան (AM), Արթուր Կեւեյան (AM), Էդմոն Կեւեյան (AM)
(71) Դանտես Կեւեյան (AM), Խաչիկ Կեւեյան (AM), Արթուր Կեւեյան (AM), Էդմոն Կեւեյան (AM)
(73) Դանտես Կեւեյան, Երեւան, Բուռնազյան 23ա (AM), Խաչիկ Կեւեյան, Երեւան, Բուռնազյան 23ա (AM), Արթուր Կեւեյան, Երեւան, Բուռնազյան 23ա (AM), Էդմոն Կեւեյան, Երեւան, Բուռնազյան 23ա (AM)

(54) **Օրթոպեդիական սարքվածք ողնաշարի պաթոլոգիայի կոնսերվատիվ բուժման համար**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես օրթոպեդիային, հատկապես ողնաշարի պաթոլոգիայի կոնսերվատիվ բուժման սարքերին: Սարքը բաղկացած է բժշկական թախտից, որի վրա ընդլայնական շարժման հնարավորությամբ տեղադրված է Π-անման շրջանակ, որի միջով անցնում են երկու ուղղաձիգ եւ մեկ հորիզոնական պտուտակավոր սեղմակ- թաթիկներ: Թախտի կողմնային ուղղորդիչի վրա տեղադրված են եւս երկու հորիզոնական սեղմակ – թաթիկներ: Թախտի գլխավերեւում ամրացված է պտուտակավոր ձգող ձող՝ «Գլիսոն» տիպի օղակով, իսկ ոտքատեղում ձգող ձող՝ գոտկային գոտիով:

Սկոլիոզի բուժման նպատակով հիվանդին պառկեցնում են թախտի վրա այնպես, որ սապատը հայտնվի Π-անման շրջանակի տակ: Սեւեռելով մարմնի դիրքը, սկսում են ողնաշարի դեֆորմացված մասի դոզավորված սեղմումը, 3-15 բոպե տեւողությամբ, որից հետո կատարում են մարմնի ձգում 3-10 բոպեի ընթացքում: Բուժումը տեւում է 7-10 օր:

Ապահովվում է սկոլիոզի կոնսերվատիվ բուժումը: 1 նկ.:

---

(51)[7] **A61K 7/16** (11) **948** (13) **A1**
C01B 33/26
(21) 97024 (22) 30.08.1995
(31) 08/297,181 (32) 31.08.1994 (33) US
(85) 28.03.1997
(86) PCT/US 95/11010, 30.08.1995
(72) Սաթիշ Կ. Վեյսոն (US), Ջեյմս Ե. Սամփթեր (US)
(71) Ջեյ Էմ Հյուբեր Քորփորեյշն (US)
(73) Ջեյ Էմ Հյուբեր Քորփորեյշն (US)
(74) Է. Նահապետյան

(54) **Ատոմների մաքրման բաղադրանյութ, մասնիկների ձեւով նատրիումի ալյումասիլիկատի ստացման եղանակ եւ նատրիումի ալյումասիլիկատ**

(57) Բաղադրանյութը պարունակում է հղկանյութ, խոնավացնող նյութ, ջուր եւ կապակցանյութ, ընդ որում, որպես հղկանյութ այն պարունակում է նատրիումի ալյումասիլիկատ, որը պահանջում է 100գ նատրիումի ալյումասիլիկատի հաշվարկով 50 գրամը գերազանցող ջրի քանակություն: Բաղադրանյութն ունի ջրի եւ հղկանյութի՝ 1-ը գերազանցող հարաբերակցություն:

Նատրիումի ալյումասիլիկատն ունի $Na_2O{\cdot}Al_2O_3{\cdot}4XSiO_2{\cdot}YH_2O$ բանաձեւը, որտեղ՝ X-ը 2 - 3,4 է, իսկ Y-ը 2X-3X է:

Առաջարկված է նաեւ նատրիումի ալյումասիլիկատի ստացման եղանակը: 3 անկախ կետ:

---

(51)[7] **A61K 33/14** (11) **949** (13) **A2**
A61K 33/18
A61K 31/70
A61K 31/74
(21) P20000032 (22) 17.04.2000
(41) 08.08.2000
(72) Ալեքսանդր Իլյին (KZ), Էմիլ Գաբրիելյան (AM), Լեւոն Մխիթարյան (AM)
(71) «Արմենիկում+» ԲԲԸ (AM)
(73) «Ա րմենիկում +» ԲԲԸ (AM)
(74) Հ. Մանուկյան
(54) **Հակավիրուսային եւ հակաբակտերիական դեղագործական պատրաստուկ «Արմենիկում » եւ դրա կիրառումը վարակիչ հիվանդությունների բուժման համար**
(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ հակավիրուսային եւ հակաբակտերիական դեղագործական պատրաստուկներին եւ դրանց կիրառմանը վարակիչ հիվանդությունների բուժման համար:

Առաջարկվում է հակավիրուսային եւ հակաբակտերիական դեղագործական պատրաստուկ, որը պարունակում է յոդ, յոդի կալիումական կամ նատրիումական աղ, լիթիումի քլորիդ, սինթետիկ ջրալուծելի պոլիմեր, միա-, օլիգո- եւ բազմաշաքարների խառնուրդ, միա-, օլիգո- եւ բազմաշաքարների հալոգենածանցյալների խառնուրդ, նատրիումի քլորիդ եւ ջուր: Կաթնասուններին, այդ թվում եւ մարդուն, պատրաստուկը ներարկվում է ներերակային: Պատրաստուկը կիրառվում է ՁԻԱՀ-ի եւ ուղեկցող օպորտունիստական հիվանդությունների բուժման համար: 2 անկախ կետ:

---

(51)[7] **A61K 38/00** (11) **950** (13) **A1**
C07K 5/12
(21) 97092 (22) 07.03.1996
(31) 08/400,057 (32) 07.03.1995 (33) US
08/482,141 07.06.1995 US
(85) 07.10.1997
(86) PCT/US96/03246, 07.03.1996
(72) Ռիչարդ Մուր (US), Մարկուս Թայուս (US), Ռասսել Բէրոու (AU), Ջիան Լիանգ (CN), Թոմաս Քորբեթ (US), Ֆրեդերիք Վալերիոթ (CA), Թոմաս Հեմշեյդ (DE)
(71) Յունիվերսիթի օֆ Հավայի (US), Ուէյն Սթեյթ Յունիվերսիթի (US)
(73) Յունիվերսիթի օֆ Հավայի (US), Ուէյն Սթեյթ Յունիվերսիթի (US)
(74) Ռ. Գեւորգյան
(54) **Կրիպտոֆիցինային միացություն, դրա ստացման եղանակ, դեղագործական բաղադրանյութ, կաթնասունի բջջի գերաճի արգելակման եղանակ, կաթնասունի մոտ գերաճող բջիջներով հարուցված ախտաբանական վիճակի թեթեւացման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է դեղագործությանը, մասնավորապես, կրիպտոֆիցինային միացություններին, դրանց ստացման եղանակներին եւ նաեւ՝ ուռուցքաբանությանը, մասնավորապես, գերաճող բջիջներով հարուցված ախտաբանական վիճակների թեթեւացման եղանակներին:

Կրիպտոֆիցինային միացությունները ունեն ընդհանուր բանաձեւ.

Քաղցկեղով հիվանդ կաթնասունին, այդ թվում եւ մարդուն, արդյունավետ քանակությամբ ներմուծում են կրիպտոֆիցինային միացություն պարունակող դեղագործական բաղադրանյութ՝ գերաճող բջիջների աճը արգելակելու համար: 6 անկախ կետ, 14 նկ.:

---

(51)[7] **A63F 3/02** (11) **951** (13) **A2**
(21) 99123 (22) 29.11.1999
(41) 08.08.2000
(72) Արմեն Հակոբյան (AM)
(71) Արմեն Հակոբյան (AM)
(73) Արմեն Հակոբյան, ք. Վայք, Շահումյան 2, բն. 20 (AM)
(54) **Սեղանի խաղ**
(57) Գյուտը վերաբերում է սեղանի խաղերին, մասնավորապես, շախմատին, շաշկիին եւ շախմատի խաղադաշտերում խաղացվող այլ խաղերին:

Սարքն ունի հիմք, մեկը մյուսի վերեւում տեղադրված առնվազն երկու խաղատախտակ, որոնք ունեն խաղադաշտի վանդակներ: Յուրաքանչյուր խաղատախտակը կազմված է 36 խաղադաշտի վանդակից: Խաղատախտակները կարող են տեղադրվել հորիզոնական հարթությունում տեղաշարժման հնարավորությամբ՝ թվային կամ տառային շարքին զուգահեռ:

Խաղը գրավիչ է, նպաստում է տարածական մտածողության զարգացմանը: 3 նկ.:

---

(51)[7] **B07B 1/46** (11) **952** (13) **A2**
B29C 44/12
(21) 99100 (22) 23.01.1998

(31) 197 06 601.1 (32) 20.02.1997 (33) DE
(41) 08.08.2000
(85) 20.09.1999
(86) PCT/ CH 98/00023, 23.01.1998
(72) Քրիստոֆ Կելլեր (CH), Մարկ Բահման (CH)
(71) Բյուլեր ԱԳ (CH)
(73) Բյուլեր ԱԳ (CH)
(74) Հ. Դավթյան
(54) **Հարթ քարմաղի մաղի շրջանակ եւ դրա պատրաստման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է բաժանիչ սարքերին:

Մաղի շրջանակը, ներառյալ ճողային միջակապերը, պատրաստված է պլաստմասսայից՝ միասնական դետալի ձեւով, ընդ որում, մաղի գործվածքը միակցումով միացված է մաղի շրջանակին եւ ճողային միջակապերին՝ փրփուրով շրջապատման միջոցով: Այլ տարբերակով մաղի շրջանակը կարող է ունենալ մետաղյա հիմնակմախք: Որպես պլաստմասսա գերադասելի է օգտագործել փրփրված պլաստմասսա, մասնավորապես՝ ՊՈՒՐ նյութը: 3 անկախ կետ, 3 նկ.:

---

(51)[7] **B27J 5/00** (11) **953** (13) **A2**
CO8L 97/00
(21) 99131 (22) 25.06.1998
(31) 97 08 111 (32) 27.06.1997 (33) FR
(41) 08.08.2000
(85) 20.12.1999
(86) PCT/FR98/01349, 25.06.1998
(72) Պատրիս Ռոբիշոն (FR), Ֆիլիպ Նոբլլ (FR)
(71) Պեռնո Ռիկար (FR)
(73) Պեռնո Ռիկար (FR)
(74) Հ. Դավթյան
(54) **Խցանների արտադրության մեջ օգտագործվող բաղադրության ստացման եղանակ, բաղադրանյութ եւ խցան այդպիսի բաղադրությամբ**
(57) Գյուտը վերաբերում է խցանների արտադրությունում օգտագործվող բաղադրության ստացման եղանակներին:

Գյուտի էությունն այն է, որ եղանակը ներառում է հետեւյալ փուլերը.

ա) խցանածառի ենթակեղեւի շերտերի մանրացում մինչեւ փոքրաչափ հատիկների,

բ) նշված ենթակեղեւի հատիկների մասնատում մինչեւ լիգնինի բարձր պարունակություն ունեցող հատիկների եւ սուբերինի բարձր պարունակություն ունեցող հատիկների,

գ) լիգնինով հարուստ հատիկների անջատում սուբերինով հարուստ հատիկներից, նշված բաղադրությունում միայն սուբերինով հարուստ հատիկներ ստանալու նպատակով:

Գյուտը վերաբերում է նաեւ բաղադրանյութերին, որոնք ներառում են սուբերինով հարուստ ենթակեղեւի հատիկներ, եւ այդ բաղադրանյութերը պարունակող խցաններին: 3 անկախ կետ:

---

(51)[7] **B62D 55/116** (11) **954** (13) **A2**
(21) P20000037 (22) 03.05.2000
(41) 22.09.2000
(72) Արամայիս Եսոյան (AM)
(71) Արամայիս Եսոյան (AM)
(73) Արամայիս Եսոյան, Կոտայքի մարզ, գյուղ Քանաքեռավան (AM)
(54) **Թրթուրավոր մեքենայի կմախքի ուղղման սարքավորում**
(57) Գյուտը վերաբերում է տրանսպորտային մեքենաշինությանը, մասնավորապես՝ ռելիեֆի թեքության վրա շահագործվող թրթուրավոր ընթացքային մաս ունեցող տրանսպորտային միջոցներին:

Սարքավորումը բաղկացած է շարժական հենարաններից, որոնք տեղակայված են շրջանակի երկու կողմերում, դրանք իրար կապող լիսեռներից, որոնք շարժահաղորդակով միացված են հիդրոգլանին, իսկ շարժական հենարանները կապող լիսեռները ծնկաձեւ են, ինչի շնորհիվ թրթուրավոր մեքենայի աջ եւ ձախ կողմերում գտնվող շարժական հենարանները եւ դրանց հենված ընթացքային մասի գլանվակները կարող են բարձրացվել եւ իջեցվել, կարգավորելով թեքության վրա աշխատող թրթուրավոր մեքենայի շրջանակի դիրքը:

Բարձրացվում է թրթուրավոր մեքենայի կայունությունը: 3 նկ..:

---

(51)[7] **C02F 1/46** (11) **955** (13) **A1**
C02F 9/00
C25B 11/03
(21) 97006 (22) 20.06.1995
(31) 2126254 (32) 20.06.1994 (33) CA
(85) 20.01.1997
(86) PCT/CA95/00355, 20.06.1995
(72) Բրայան Ջորջ Քուք (CA)
(71) Բրայան Ջորջ Քուք (CA)
(73) Բրայան Ջորջ Քուք (CA)
(74) Է. Նահապետյան
(54) **Հեղուկի մաքրման եղանակ եւ սարք**
(57) Գյուտը վերաբերում քիմիայի բնագավառին, մասնավորապես հեղուկի մաքրման եղանակներին եւ սարքերին:

Ըստ եղանակի, մաքրման ենթակա հեղուկը թողանցում են մաքրման խցի ներթողման անցքով եւ մղում այն հեղուկի համար թափանցելի էլեկտրոլիտային բջիջներից առնվազն մեկի միջով: Էլեկտրոլիտային բջիջն ունի արտաքին ծակոտկեն առաջին եւ համառանցք տեղակայված ներքին երկրորդ էլեկտրոդներով կազմված անցուղի: Ընդ որում էլեկտրոլիտային բջիջները տեղադրում են այնպես, որ հեղուկի հոսքը բջիջների նկատմամբ լինի լայնակի: Էլեկտրոլիզը կատարում են անցուղիներով հեղուկի անցմանը զուգընթաց, այնուհետեւ հեղուկը մղում դեպի հեղուկի արտաթողման անցքը եւ թողարկում այն:

Հեղուկի մաքրման սարքն ունի հեղուկի մաքրման

խուց, որի իրանի վրա կան հեղուկի ներթողման եւ արտաթողման անցքեր, նրանց միջեւ տեղադրված հեղուկի համար թափանցելի առնվազն մեկ էլեկտրոլիտային բջիջ, որն ունի արտաքին ծակոտկեն առաջին եւ համառանցք տեղակայված ներքին երկրորդ էլեկտրոդներով կազմված անցուղի:

Ապահովվում է հեղուկի աղտոտվածությունների խտության զգալի նվազեցում: 2 անկախ կետ, 8 նկ.:

---

(51)[7] **C03B 5/02** (11) **956** (13) **A2**
(21) P20000045 (22) 29.05.2000
(41) 22.09.2000
(72) Համլետ Հակոբյան (AM), Ալեքսանդր Համբարձումյան (AM), Կոստան Կոստանյան (AM)
(71) Նյութաբանության գիտաարտադրական ձեռնարկություն (AM)
(73) Նյութաբանության գիտաարտադրական ձեռնարկություն, Երեւան, Չարենցի 17 (AM)
(54) **Գարնիսաժային էլեկտրական վառարան**
(57) Գյուտը վերաբերում է ապակու արտադրությանը եւ կարող է կիրառվել ապակու եփման էլեկտրավառարաններ ստեղծելիս:

Գարնիսաժային էլեկտրական վառարանն ունի ջրային սառեցումով մետաղական պատյան, հատակի կերամիկական սալ, թողարկման եւ մշակման հանգույցներ եւ կողմնային պատերին ամրացված էլեկտրոդներ: Գյուտի համաձայն վառարանը լրացուցիչ ունի թողարկող խողովակի շուրջը տեղակայված բարձրահաճախական ինդուկտոր եւ թողարկող խողովակի ծայրին տեղադրված փոխարինվող գլխիկ: Ֆազային էլեկտրոդներն ունեն հարթ թիթեղի ձեւ, իսկ զրոյական էլեկտրոդի հատվածքը եռանկյունաձեւ կամ շրջանաձեւ է: 2 նկ.:

---

(51)[7] **C07D 261/08** (11) **957** (13) **A2**
C07D 261/04
(21) 97075 (22) 20.08.1997
(31) 96113531.6 (32) 23.08.1996 (33) EP
96117863.9 07.11.1996 EP
(41) 08.08.2000
(72) Մարկուս Կնելլ (DE), Մոնիկա Բրինկ (DE)
(71) Ամերիքն Ցիանամիդ Քամփնի (US)
(73) Ամերիքն Ցիանամիդ Քամփնի (US)
(74) Է. Նահապետյան
(54) **(Հետերո) արիլօքսիհետերոարիլկարբօքսամիդների ստացման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիային, մասնավորապես՝ (հետերո) արիլօքսիհետերոարիլկարբօքսամիդների ստացման եղանակին:

Եղանակի էությունն այն է, որ եռքլորմեթիլազինը թթվի հետ տաքացվում է մինչեւ 75°-160°C ջերմաստիճանը՝ առաջացնելով միահալոգենացված ազինիլքլորանհիդրիդ, որը իներտ լուծիչի եւ/կամ հիմքի առկայությամբ կամ առանց դրա խառնում են ամինի հետ եւ ստացված միահալոգենացված ազինիլկարբօքսամիդը հիմքի առկայությամբ փոխազդում են արոմատիկ կամ հետերոարոմատիկ հիդրօքսիլ միացության հետ:

Եղանակը հնարավորություն է տալիս ապահովելու բարձր ելք՝ չկիրառելով շրջակա միջավայրը աղտոտող լուծիչներ:

---

(51)[7] **C07K 14/47** (11) **958** (13) **A2**
C12N 15/12
(21) P20000009 (22) 13.08.1998
(31) 97/10487 (32) 19.08.1997 (33) FR
(41) 08.08.2000
(85) 18.02.2000
(86) PCT/FR98/01805, 13.08.1998
(72) Ալեն Բեռնո (FR), Կրիստիան Կլեպե (FR), Ռոլանդ Հայլիգ (FR), Ժան Վայսենբախ (FR), Իզաբել Տուիտու (FR)
(71) Ժենետոն II (FR)
(73) Ժենետոն II (FR)
(74) Հ. Մանուկյան
(54) **Միջերկրածովյան ժառանգական տենդի գենը**
(57) Գյուտը վերաբերում է նոր նուկլեինաթթուներին, մասնավորապես՝ միջերկրածովյան ժառանգական տենդի գենին եւ այդ գենով կոդավորվող սպիտակուցին: Գյուտը վերաբերում է նաեւ նշված գենի հայտնաբերման եւ ամպլիֆիկացիայի զոնդերին ու պրայմերներին, ինչպես նաեւ՝ ժառանգական տենդի գենի հայտնաբերման լրակազմերին ու եղանակներին: Գյուտը վերաբերում է նաեւ գենի եւ սպիտակուցի բոլոր կիրառումներին, մասնավորապես՝ նրանց կիրառմանը գենային թերապիայում:

Հայտնաբերված Marenostrine գենի չորս մուտացիաները, որոնք տեղակայված են այդ գենի միեւնույն էկզոնում, առնչվում են միջերկրածովյան ժառանգական տենդի ախտածնությանը, ինչը կարող է օգտագործվել հիվանդության բուժման եւ ախտորոշման համար: 10 անկախ կետ:

---

(51)[7] **C09D 163/00** (11) **959** (13) **A2**
(21) P20000089 (22) 12.09.2000
(41) 20.11.2000
(72) Վլադիմիր Օվչիյան (AM)
(71) Վլադիմիր Օվչիյան (AM)
(73) Վլադիմիր Օվչիյան, Երեւան, Սունդուկյան 28ա, բն. 35 (AM)
(54) **Ժանգի բարեփոխիչ**
(57) Գյուտը վերաբերում է քիմիայի բնագավառին, մասնավորապես օրգանական թաղանթագոյացուցիչների հիմքով ժանգի բարեփոխիչ-ներկաստառի բաղադրանյութին:

Ժանգի բարեփոխիչը պարունակում է թաղան-

թագոյացուցիչ-էթինոլային լաքի եւ էպօքսիդային խեժի խառնուրդ՝ (30-45): 1 ծավալային հարաբերակցությամբ, գունանյութեր, բարեփոխող հավելանյութեր, պլաստիկարար եւ լուծիչ, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (զանգ. %)՝

թաղանթագոյացուցիչ	*30-40*
բարեփոխող հավելանյութ	*3-6*
պլաստիկարար	*4-5*
գունանյութեր	*0-5*
լուծիչ	*մնացածը:*

Բարձրանում է ժանգի բարեփոխիչի արդյունավետությունը եւ ժանգի կերպափոխված շերտի պաշտպանիչ հատկությունը, ինչպես նաեւ բարելավվում է ներկաստառի թաղանթի պլաստիկությունը:

---

(51)[7] **C12P 7/14** (11) **960** (13) **A2**
(21) P20000072 (22) 01.08.2000
(41) 20.02.2001
(72) Երվանդ Բաղդասարյան (AM), Գրիգոր Բաղդասարյան (AM), Արթուր Բաղդասարյան (AM)
(71) Երվանդ Բաղդասարյան (AM)
(73) Երվանդ Բաղդասարյան, Երեւան, Ավան, Բրյուսովի 67, բն. 20 (AM)
(54) **Էթիլային սպիրտի ստացման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է սննդարդյունաբերությանը, մասնավորապես էթիլային սպիրտի արտադրության եղանակներին:

Պատրաստում են շաքարներ եւ հանքային աղեր պարունակող սննդամիջավայր, որին ավելացնում են Saccharomyces ցեղի սնկեր, 20-23 մլ/լ խմորասնկային ավտոլիզատ եւ 3,6-4,2գ/լ DL - ալանին:

Եղանակը հնարավորություն է տալիս մեծացնել էթիլային սպիրտի ելքը եւ կրճատել խմորման պրոցեսի տեւողությունը:

---

(51)[7] **C14C 11/00** (11) **961** (13) **A2**
(21) P20000095 (22) 13.10.2000
(41) 20.11.2000
(72) Սոկրատ Մարգարյան (AM), Կարեն Մինասյան (AM), Ռուդոլֆ Սարկիսով (AM)
(71) Սոկրատ Մարգարյան (AM), Կարեն Մինասյան (AM), Ռուդոլֆ Սարկիսով (AM)
(73) Սոկրատ Մարգարյան, Երեւան,Գոգոլի 85, բն. 32 (AM), Կարեն Մինասյան, Երեւան, Շարուրի 15, բն. 27 (AM), Ռուդոլֆ Սարկիսով, Երեւան, Բաղրամյան 37 (AM)
(54) **Կաշվի վերջնամշակման բաղադրանյութ**
(57) Գյուտը վերաբերում է կաշվի արդյունաբերությանը, մասնավորապես կաշվի վերջնամշակման բաղադրանյութին:

Բաղադրանյութը պարունակում է (զանգվ.%). գունանյութային մածուկ՝ 17.0, կազեինի 10%-անոց լուծույթ՝ 3.2, մոմային էմուլսիա (20%-անոց)՝ 3.2 , թաղանթագոյացուցիչ՝ Նաիրիտ Л-МС՝ 68 եւ ջուր՝ մնացածը:

Որպես գունանյութային մածուկ վերցված է հանքային գունանյութի՝ օխրայի հիմքով խառնուրդը, որը պարունակում է (զանգվ.%). օխրա (1-3մկմ չափի)՝ 39-46, կազեինի 18%-անոց լուծույթ՝ 25-30, ալիզարինային յուղ՝ 7-9.8, մակերեւութաակտիվ նյութ (ОП-10)՝ 1.4-1.6 եւ ջուր՝ մնացածը:

Բարձրանում են ծածկութային թաղանթների բազմակի ճկման, բաց շփման, լուսակայունության եւ ջերմակայունության ցուցանիշները, ապահովվում է թաղանթների բարձր հարակցում եւ ծածկելիություն:

---

(51)[7] **C23C 14/00** (11) **962** (13) **A2**
C30B 23/02
B32B 33/00
(21) P20000004 (22) 20.01.2000
(41) 08.08.2000
(72) Արմեն Կուզանյան (AM), Վոլոդյա Կարապետյան (AM), Արմեն Գուլյան (AM), Գեորգ Բաղալյան (AM)
(71) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (AM)
(73) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ , Աշտարակ 2, ՖՀԻ (AM)
(54) **Թաղանթների ստացման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է նյութագիտության բնագավառին, նուրբ թաղանթների ստացմանը եւ կարող է կիրառվել մեծաչափ թաղանթներ սինթեզելիս:

Ըստ թաղանթների ստացման եղանակի, պտտվող թիրախի նյութից լազերային ճառագայթով ստացված պլազմային ջահով փոշեպատվում է պտտվող տակդիրը: Փոշեպատման ընթացքում, թեքելով թիրախը տակդիրի նկատմամբ, պլազմային ջահի առանցքն ուղղվում է տակդիրի շառավղի տարբեր կետերին, ընդ որում, լազերային ճառագայթն ուղղվում է ուղղահայաց այն առանցքին, որի շուրջը թեքվում է թիրախը՝ կիզակետված լազերային բիծը պահելով առանցքի վրա:

Առաջարկված եղանակով կարելի է ստանալ համեմատաբար մեծ չափերի (100մմ տրամագծի կարգի), համասեռ հաստության թաղանթներ: 2նկ.:

---

(51)[7] **C23C 14/00** (11) **963** (13) **A2**
C30B 23/02
B32B 33/00
(21) P20000005 (22) 20.01.2000
(41) 08.08.2000
(72) Արմեն Կուզանյան (AM), Վոլոդյա Կարապետյան (AM), Աշոտ Գյուլամիրյան (AM), Գեորգ Բաղալյան (AM)
(71) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (AM)

(73) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ, Աշտարակ-2, ՖՀԻ (AM)

(54) **Թաղանթների ստացման սարք**

(57) Գյուտը վերաբերում է նյութագիտության բնագավառին եւ կարող է կիրառվել մեծաչափ համասեռ հաստության եւ բաղադրության նուրբ թաղանթների ստացման համար:

Թաղանթների ստացման սարքն ունի վակուումային խցիկ, պտտվող թիրախ, տակդիր, լազեր, վառարան, դիմակ: Ընդ որում դիմակն ունի կոր սեկտորի ձեւի մեկ կամ մեկից ավելի ճեղքեր, որոնք ունեն այնպիսի գոգավորվածություն, որ սեկտորի միջին գիծը համընկնի պլազմային ջահի միեւնույն զանգվածափոխադրման արագությունը բնորոշող կորի հետ, իսկ սեկտորների գագաթները տեղադրվում են կիզակետված բիծը տակդիրի կենտրոնին միացնող ուղղի վրա:

Նման սարքով կարելի է սինթեզել մեծաչափ համասեռ հաստությամբ նուրբ թաղանթներ: 4 նկ.:

---

(51)[7] **D03D 29/00** (11) **964** (13) **A2**
D03D 13/00
(21) P20000069 (22) 28.07.2000
(41) 22.09.2000
(72) Գագիկ Կարապետյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Միեր Ռոստոմյան (AM)
(71) Գագիկ Կարապետյան (AM), Վիկտոր Մակարյան (AM), Միեր Ռոստոմյան (AM)
(73) Գագիկ Կարապետյան, Երեւան, Բաշինջաղյան 121(AM), Վիկտոր Մակարյան, Երեւան, Բաբայան 28, բն. 29 (AM), Միեր Ռոստոմյան, Երեւան, Վարդանանց 5ա, բն. 275 (AM)

(54) **Ձեռքի գորգագործական հաստոցին կից բացվածքագոյացման մեխանիզմ**

(57) Մեխանիզմն ունի ազբակալիչներ, որոնք բլոկաձեւ են եւ հաջորդաբար ամրացված են ուղղորդիչ կալիչների վրա: Կալիչները տեղակայված են հաստոցի ուղղորդիչների վրա եւ տարանջատված են ուղղագիծ հարթության մեջ՝ հենքի թելերին ուղղահայաց հարթությամբ տեղափոխման հնարավորությամբ: Ազբերը դասավորված են շախմատային կարգով: Դրանց մի ծայրն ունի թելանցք, իսկ մյուս ծայրը սեւեռված է ազբակալիչում: Ազբերը կլոր ձողեր են, դրանց թելանցքով ծայրի հարթությունը թեքված է ձողի առանցքի նկատմամբ:

Պարզեցվում է մեխանիզմի կառուցվածքը, ապահովվում է թելանցքի միջով հենքի թելերի ազատ սահումը: 7 նկ.:

---

(51)[7] **E04G 9/00** (11) **965** (13) **A2**
E04G 11/00
(21) 99098 (22) 03.03.1998
(31) 08/818,136 (32) 14.03.1997 (33) US
(41) 08.08.2000
(85) 14.09.1999
(86) PCT / US98/ 04106, 03.03.1998
(72) Պատրիկ Դը Լը Ֆեվրը (US)
(71) Պատրիկ Դը Լը Ֆեվրը (US)
(73) Պատրիկ Դը Լը Ֆեվրը (US)
(74) Հ. Դավթյան

(54) **Ջրահոսուն նյութերից տարրերի ձեւավորման համար թեթեւ կաղապարամածային համակարգ շինարարության մեջ օգտագործելու նպատակով**

(57) Գյուտը վերաբերում է շինարարության ոլորտին, մասնավորապես բետոնե շինարարական կոնստրուկցիաների կաղապարման համար բազմակի օգտագործման համակարգերին:

Համակարգը բաղկացած է կոմպոզիտային եւ թեթեւ պլաստիկե կաղապարամածային անցքավոր պանելներից եւ շրջանակներից, որոնք նախապես լարված են հանվող եւ միմյանց փոխարինող պլաստիկե մատերի միջոցով: Պանելները եւ շրջանակները հավաքված են եւ ֆիքսված շրջանակային համակարգի միջոցով, որում օգտագործված են անցքավոր զոլակների համակցություններ: Դրանք օգտագործվում են որպես հիմնային ուղղորդներ ուղղաձիգ եւ հորիզոնական խուղակների համար: Զոլակների անցքերի մեջ մտնում են տեղակայող մատերը: Անցքավոր պանելների եւ շրջանակային համակարգի օգտագործումն ապահովում է կաղապարող սարքի բազմակի օգտագործումը: Կաղապարող սարքի չափերը կարող են փոփոխվել յուրաքանչյուր առանձին կիրառման դեպքում: Համակարգի ողողագծությունն ապահովվում է կամ «մատ-անցք», կամ միացման ենթակա հարեւան օղակների միջեւ գտնվող կապող տարրերի մատերի համակցությունների միջոցով: 3 անկախ կետ: 19 նկ.:

---

(51)[7] **E04H 9/02** (11) **966** (13) **A2**
(21) P20000029 (22) 11.04.2000
(72) Ռուբեն Բաղալյան (AM), Լյովա Բաբսեղյան (AM), Արկադի Արոնչիկ (IL), Կարեն Բաբախանով (AM), Նորա Հակոբյան (AM)
(71) «Լոռիշեն» ՍՊԸ (AM)
(73) «Լոռիշեն» ՍՊԸ, Երեւան, Նանսենի 1-ա, բն. 19 (AM)

(54) **Սեյսմակայուն շենքի կարկասաբլոկային հավաքովի միաձույլ կոնստրուկտիվ համակարգ**

(57) Գյուտը վերաբերում է արդյունաբերական եղանակով սեյսմակայուն բնակելի շենքերի շինարարության բնագավառին:

Կարկասաբլոկային համակարգում ներքին եւ արտաքին պատերը հավաքված են մեկ տիպի բազմանցքավոր խոշոր բլոկներից եւ երկթեւ գոտային տարրերից: Բլոկները տեղադրված են լայնացված կարերով: Դրանք, ինչպես եւ պատերի պակասող հատվածները ու երկթեւ գոտային տարրերի խոռոչները իրականացված են միաձույլ երկաթբետոնից, առանց միջադիր մանրամասների օգտագործման եւ

զոդմամբ միացման: Գոտային տարրերի թեւերը միացված են միմյանց միջակապերով, որոնք տեղադրված են կողային նիստերից եւ ստորին եզրերից դեպի հետ, իսկ առջեւում տեղադրված են պարզունակի միաձույլ մասի երկայնական ամրանները: Արտաքին պատերը, բացի կլոր խոշոր բլոկային մասից, ընդգրկում են նաեւ ինքնակրող մասը, որը ճարտարապետական արտահայտչականության համար իրագործված է ամրանավորված միաձուլող բետոնի շերտով եւ երեսպատող քարերով: Պատերի բլոկները ունեն ուղղահայաց դատարկություններ, որոնք կարող են օգտագործվել եւ որպես օդափոխության մղանցքներ:

Ապահովվում է շենքերի սեյսմակայունությունը, հուսալիությունը եւ արդյունաբերական պատրաստվածքների նվազագույն տեսականու օգտագործումը: 6 նկ.:

---

(51)[7] **E05B 25/00** (11) **967** (13) **A2**
(21) P 20000035 (22) 02.05.2000
(41) 08.08.2000
(72) Ալբերտ Պողոսյան (AM), Սուրեն Պողոսյան (AM)
(71) Ալբերտ Պողոսյան (AM)
(73) Ալբերտ Պողոսյան, Երեւան, Շիրակի 20, բն. 30 (AM)
(54) **Փականք**
(57) Գյուտը վերաբերում է սկավառակային վրաղիր եւ ներդիր փականքներին:

Փականքն ունի իրան, որի ներքին մակերեւույթի վրա արված են երկայնական ակոսիկներ, երկայնական կտրվածք ունեցող բաժակ, որի մեջ դասավորված են փակիչ սկավառակները, անշարժ եւ զսպանակային տափօղակները, եւ բույթ:

Կտրվածք ունեցող զսպանակային տափօղակները տեղադրված են բաժակի վերջամասում, նրանց ելուստների ծայրերը դուրս են մնում բաժակի արտաքին մակերեւույթից այնքանով, որ հավասար են կամ փոքր իրանի ներքին մակերեւույթի վրա արված ակոսիկների խորությանը:

Բարձրանում է փականի հուսալիությունը: 3 նկ.:

---

(51)[7] **F02B 75/26** (11) **968** (13) **A2**
(21) P 20000003 (22) 19.01.2000
(41) 08.08.2000
(72) Մաքսիմ Ղուկասյան (AM)
(71) Մաքսիմ Ղուկասյան (AM)
(73) Մաքսիմ Ղուկասյան, Երեւան, Շիրակի 14, բն. 3 (AM)
(54) **Ներքին այրման շարժիչ**
(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես ներքին այրման շարժիչներին:

Շարժիչն ունի գլաններով իրան, շարժաթեւ ու մխոցներ, ատամնանիվների համակարգով ելքային լիսեռի հետ կապված ծնկաձեւ լիսեռներ:

Մի ծայրով շարժաթեւը հոդակապով միացված է մխոցին, մյուս ծայրով հոդակապով միացված է արտակենտրոն ատամնանիվին, որը տեղակայված է ծնկաձեւ լիսեռի վրա եւ մոլորակային մեխանիզմի կենտրոնական ատամնանիվի հետ կազմում է ատամնանիվային զույգ: Կենտրոնական ատամնանիվի սկզբնական շրջանագծի շառավիղը երկու անգամ մեծ է արտակենտրոն-ատամնանիվի սկզբնական շրջանագծի շառավղից:

Տեխնիկական արդյունքն է՝ կոնստրուկցիայի պարզեցումը, մխոցի շարժի դիապազոնի մեծացումը, մխոցի եւ գլանի պատերի միջեւ շփման ուժերի փոքրացումը, շարժիչի հուսալիության եւ երկարակեցության բարձրացումը, շահագործման պայմանների լավացումը: Ելնելով շարժիչի բեռնվածության աստիճանից, աշխատանքի ընթացքում փոփոխվում է սեղմելիության աստիճանը: Կախված վառելանյութի տեսակից՝ նշանակվում է սեղմելիության աստիճանի անվանական մեծությունը (շեղումը): 5 նկ.:

---

(51)[7] **F24J 2/02** (11) **969** (13) **A2**
(21) P20000066 (22) 26.07.2000
(41) 20.10.2000
(72) Բորիս Բաղալյան (AM), Համլետ Գասպարյան (AM), Սամվել Ենոքյան (AM)
(71) Բորիս Բաղալյան (AM), Համլետ Գասպարյան (AM), Սամվել Ենոքյան (AM)
(73) Բորիս Բաղալյան, Երեւան, Դավիթաշեն 1-ին թաղ. 41, բն.6 (AM), Համլետ Գասպարյան, Երեւան, Հարավ-արեւմտյան Բ-2 թաղ., Բաբաջանյան 153, բն. 26 (AM), Սամվել Ենոքյան, Երեւան, Նորքի 2-րդ զանգված 50, բն. 50 (AM)
(54) **Արեգակնային տաքացուցիչ սարք**
(57) Գյուտը վերաբերում է ջերմատեխնիկային, մասնավորապես՝ ջերմային խողովակներով արեւակայանքներին:

Արեգակնային տաքացուցիչ սարքն ունի համակենտրոնիչ եւ ամբարիչ, որն իրագործված է մխոցաձողի ծայրին ամրացված ջերմափոխանակիչի տեսքով եւ տեղակայված է համակենտրոնիչի առանցքի երկայնքով՝ տեղաշարժվելու հնարավորությամբ, ընդ որում մխոցաձողն իրականացված է երկու համառանցք, հաղորդակցվող խողովակների տեսքով, որոնք հաղորդակցվում են ջերմափոխանակիչի միջոցով եւ ձեւավորում են հեղուկ ջերմակրի, օրինակ՝ ջրի, անցուղի, որի մուտքը միացված է առբերիչ խողովակաշարին սիլֆոնի միջոցով, իսկ ելքում տեղադրված են ծայրափողակատիպ տարրեր:

Սարքը հեղուկ ջերմակրի էներգիայի օգտագործմամբ ապահովում է ջերմափոխանակիչի տեղափոխման ավտոմատացումը համակենտրոնիչի կիզակետային գոտու նկատ մամբ: 5 նկ.:

(51)[7] **G01B 2/06** (11) **970** (13) **A2**
(21) P20000075 (22) 09.08.2000
(41) 22.09.2000
(72) Վարդգես Ներսեսյան (AM)
(71) Վարդգես Ներսեսյան (AM)
(73) Վարդգես Ներսեսյան, Երեւան, Քանաքեռ ՀԷԿ 17, բն. 36 (AM)
(54) **Ինդուկցիոն հաստաչափ**
(57) Գյուտը վերաբերում է վերահսկող չափիչ տեխնիկային եւ կարող է կիրառվել գլոցման պրոցեսում էլեկտրահաղորդիչ թիթեղի հաստության հսկման համար:

Սարքն ունի պարփակ մագնիսահաղորդիչ՝ երկու սիմետրիկ ճեղքային բացակներով, որոնցից մեկը նախատեսված է հսկվող թիթեղը տեղադրելու համար, մագնիսահաղորդչի մագնիսացնող փաթույթներով առաջին կենտրոնական ձող, չափիչ փաթույթներով երկրորդ կենտրոնական ձող, որն առաջին կենտրոնական ձողի հետ կազմում է խաչաձեւ կապ: Ճեղքային բացակները կատարված են երկրորդ կենտրոնական ձողի վրա: Չափիչ փաթույթը կատարված է երկու հանդիպակաց միացված սեկցիաների տեսքով, որոնք տեղակայված են սիմետրիկ երկու կողմերից առաջին ձողի նկատմամբ: Մագնիսահաղորդչի այն ճակատային մասը, որը հակադիր է ճեղքավոր բացակ ունեցող ճակատային մասին, իրականացված է փորվածք ունեցող քառանիստ պրիզմայի տեսքով, ընդ որում այդ փորվածքը ճեղքավոր բացակի շարունակությունն է:

Բարձրացվում է չափման ճշգրտությունը: 1 նկ.:

---

(51)[7] **G01B 11/26** (11) **971** (13) **A2**
(21) 99119 (22) 05.11.1999
(41) 08.08.2000
(72) Նորիկ Բազիկյան (AM), Արմեն Մաթեւոսյան (AM), Արտաշես Մաթեւոսյան (AM)
(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)
(54) **Տրակտորի նկատմամբ գյուղատնտեսական մեքենայի անկյունային տեղափոխությունների անընդհատ չափման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկային, մասնավորապես՝ անկյունային տեղափոխությունների չափման եղանակներին եւ կարող է կիրառվել գյուղատնտեսությունում:

Տրակտորի հետ ագրեգատավորված գյուղատնտեսական մեքենայի վրա տեղադրում են չափիչ դիագրամով վահան, իսկ տրակտորի վրա՝ լազերային ճառագայթման աղբյուր եւ ժամանակի հաշվիչով օժտված տեսախցիկ այնպես, որ այն օբյեկտիվով ուղղված լինի դեպի գյուղատնտեսական մեքենան, իսկ իր կադրի առանցքներով՝ զուգահեռ եւ ուղղահայաց տրակտորի ընդլայնական առանցքի նկատմամբ: Լազերային ճառագայթը, տեսախցիկի օպտիկական առանցքը եւ տրակտորի երկայնական առանցքը պետք է լինեն զուգահեռ, իսկ դրանց պրոյեկցիաները հորիզոնական հարթության վրա պետք է համընկնեն: Որոնելի անկյան ընթացիկ մեծությունները հորիզոնական եւ ուղղահայաց հարթություններում որոշվում են չափիչ դիագրամի վրա լազերային ճառագայթի հետքով:

Բարձրացվում է չափումների ճշգրտությունը: 2 նկ.:

---

(51)[7] **G01B 17/06** (11) **972** (13) **A2**
G01B 11/26
(21) 99118 (22) 05.11.1999
(41) 08.08.2000
(72) Նորիկ Բազիկյան (AM), Արմեն Մաթեւոսյան (AM), Արտաշես Մաթեւոսյան (AM)
(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)
(54) **Ագրեգատի երկայնական առանցքի նկատմամբ տրակտորի կառավարվող անվի դարձի անկյան անընդհատ չափման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է չափողական տեխնիկային, մասնավորապես՝ անկյունային տեղափոխությունների չափման եղանակներին եւ կարող է կիրառվել գյուղատնտեսությունում:

Եղանակի էությունն այն է, որ տրակտորի վրա տեղադրում են տեսախցիկ այնպես, որ նրա օպտիկական առանցքը եւ կառավարվող անվի կենտրոնը լինեն մեկ ուղղի վրա եւ դարձի ցանկացած հնարավոր անկյան դեպքում անիվը լինի տեսախցիկի օբյեկտիվի տեսադաշտում: Օբյեկտիվի պաշտպանիչ ցանցի վրա, որը միաժամանակ նաեւ չափիչ դիագրամ է, կառավարվող անվի պատկերման դիրքով հաշվարկում են ագրեգատի երկայնական առանցքի նկատմամբ տրակտորի կառավարվող անվի դարձի որոնելի անկյունը:

Բարձրացվում է չափումների ճշգրտությունը: 2 նկ.:

---

(51)[7] **G01F 13/00** (11) **973** (13) **A2**
G09C 1/00
H04L 9/00
(21) 99065 (22) 24.03.1999
(41) 08.08.2000
(72) Միխայիլ Սկուբիլին (RU), Ալեքսանդր Պիսմենով (RU)
(71) Միխայիլ Սկուբիլին (RU), Ալեքսանդր Պիսմենով (RU)
(73) Միխայիլ Սկուբիլին, Տագանրոգ, 10-րդ նրբ. 114, բն. 51 (RU), Ալեքսանդր Պիսմենով, Տագանրոգ, Կարկասնի նրբ. 5, բն. 85 (RU)

(54) **Տեղեկատվության քողարկման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է տեղեկատվական համակարգերին, մասնավորապես՝ թվային տեղեկատվության կերպափոխման եղանակներին եւ կարող է կիրառվել հաղորդակցման կապուղիներում անթույլատրելի մուտք գործելու դեպքում տեղեկատվության պաշտպանման համար:

Եղանակի էությունն այն է, որ հաղորդող կողմում աղավաղում են սկզբնական տեղեկատվությունը եւ այնուհետեւ ընդունող կողմում միեւնույն բանալու միջոցով վերականգնում այն, քայլերի փոփոխակվող թվի չափով սիմվոլների բլոկերի փոփոխակվող ծավալները ASCII կոդերի գործածմամբ տարբեր ուղղություններով տեղաշարժման միջոցով:

Ապահովվում է գաղտնագրերի բազմազանություն, տեղեկատվության նվազագույն կորուստ, ալգորիթմային, ծրագրային եւ ապարատային իրագործման պարզեցում:

---

(51)[7] **G01J 40/12** (11) **974** (13) **A2**
(21) P20000076 (22) 11.08.2000
(41) 20.10.2000
(72) Արթուր Փափազյան (AM), Դավիթ Ղուլղազարյան (AM), Կարեն Ղուլղազարյան (AM)
(71) Կարեն Ղուլղազարյան (AM)
(73) Կարեն Ղուլղազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)
(54) **Լազերային հեռաչափ**

(57) Գյուտը վերաբերում է ռադիոէլեկտրոնիկայի բնագավառին, մասնավորապես՝ լազերային հեռաչափերին եւ կարող է կիրառվել շինարարական աշխատանքներում, երբ անհրաժեշտ է ոչ մեծ հեռավորությունները (մինչեւ մի քանի հարյուր մետր) որոշել շատ փոքր սխալներով (1 մմ կարգի):

Սարքն ունի գերբարձր հաճախությունով (ԳԲՀ) մոդուլված լազերային լույսի աղբյուր, օպտիկական համակարգ, ազդանշանային եւ հենակային Ֆոտոբազմապատկիչներ, փուլային դետեկտոր, արտաքին եւ ներքին հաղորդաձողերով ռեզոնատոր, երկու ելք ունեցող հակափուլ լարումների ԳԲՀ գեներատոր եւ երկու ԳԲՀ տրիոդ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, փոքրացվում նրա քաշը եւ գաբարիտները:1 նկ.:

---

(51)[7] **G01J 40/12** (11) **975** (13) **A2**
(21) P20000077 (22) 11.08.2000
(41) 20.10.2000
(72) Արթուր Փափազյան (AM), Դավիթ Ղուլղազարյան (AM), Կարեն Ղուլղազարյան (AM)
(71) Կարեն Ղուլղազարյան (AM)
(73) Կարեն Ղուլղազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)
(54) **Լուսահեռաչափ**

(57) Գյուտը վերաբերում է ռադիոէլեկտրոնիկայի բնագավառին, մասնավորապես՝ լազերային հեռաչափերին եւ կարող է կիրառվել շինարարական աշխատանքներում, երբ անհրաժեշտ է ոչ մեծ հեռավորություններ որոշել շատ փոքր սխալներով:

Սարքն ունի գերբարձր հաճախությունով (ԳԲՀ) մոդուլված լազերային լույսի աղբյուր, օպտիկական համակարգ, ազդանշանային եւ հենակային ֆոտոբազմապատկիչներ, փուլային դետեկտոր, ռեզոնատոր՝ իր արտաքին եւ ներքին հաղորդաձողերով ու կապի օղակներով, երկու ԳԲՀ տրիոդ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, փոքրացվում նրա քաշը եւ գաբարիտները: 1 նկ.:

---

(51)[7] **G01J 40/12** (11) **976** (13) **A2**
(21) P20000082 (22) 31.08.2000
(41) 20.10.2000
(72) Արթուր Փափազյան (AM), Դավիթ Ղուլղազարյան (AM), Կարեն Ղուլղազարյան (AM)
(71) Կարեն Ղուլղազարյան (AM)
(73) Կարեն Ղուլղազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)
(54) **Լազերային փուլային հեռաչափ**

(57) Գյուտը վերաբերում է ռադիոէլեկտրոնիկայի բնագավառին, նախատեսված է լազերային ճառագայթի օգնությամբ հեռավորությունների որոշման համար եւ կարող է կիրառվել շինարարական աշխատանքներում, երբ անհրաժեշտ է ոչ մեծ հեռավորությունները (մինչեւ մի քանի հարյուր մետր) որոշել շատ փոքր սխալներով (1 մմ կարգի):

Սարքն ունի գերբարձր հաճախությունով (ԳԲՀ) մոդուլված լազերային լույսի աղբյուր, օպտիկական համակարգ, ազդանշանային եւ հենակային Ֆոտոբազմապատկիչներ իրենց արտաքին էլեկտրոդներով, փուլային դետեկտոր, արտաքին եւ ներքին հաղորդաձողերով ռեզոնատոր, ԳԲՀ հետերոդին: Ռեզոնատորի ներքին հաղորդաձողի երկարությունը հավասար է ռեզոնատորում հետերոդինի ազդանշանի ալիքի երկարության կեսին: Ռեզոնատորի ֆոտոզգայուն մասերն ուղղված են հակադիր ուղղություններով:

Նվազում են չափումների սխալները: 1 նկ.:

---

(51)[7] **G01J 40/12** (11) **977** (13) **A2**
(21) P20000083 (22) 31.08.2000
(41) 20.10.2000
(72) Արթուր Փափազյան (AM), Տիգրան Ղուլղազարյան (AM), Կարեն Ղուլղազարյան (AM)
(71) Կարեն Ղուլղազարյան (AM)
(73) Կարեն Ղուլղազարյան, Երեւան, Կորյունի 3, բն. 6 (AM)

(54) **Լազերային ճառագայթի ԳԲՀ մոդուլմամբ հեռաչափ**

(57) Գյուտը վերաբերում է ռադիոէլեկտրոնիկայի բնագավառին, նախատեսված է լազերային ճառագայթի օգնությամբ հեռավորությունների որոշման համար եւ կարող է կիրառվել շինարարական աշխատանքներում, երբ անհրաժեշտ է ոչ մեծ հեռավորությունները (մինչեւ մի քանի հարյուր մետր) որոշել շատ փոքր սխալներով(1 մմ կարգի):

Սարքն ունի գերբարձր հաճախությունով (ԳԲՀ) մոդուլված լազերային լույսի աղբյուր, օպտիկական համակարգ, ազդանշանային եւ հենակային ֆոտոբազմապատկիչներ՝ իրենց արտաքին էլեկտրոդներով, փուլային դետեկտոր, արտաքին եւ ներքին հաղորդաձողերով ռեզոնատոր, ԳԲՀ հետերոդին: Ռեզոնատորի ներքին հաղորդաձողի երկարությունը հավասար է ռեզոնատորում հետերոդինի ազդանշանի ալիքի երկարության կեսին: Ռեզոնատորի ֆոտոզգայուն մասերն ուղղված են միեւնույն ուղղություններով:

Նվազում են չափումների սխալները: 1 նկ.:

---

(51)[7] **G01N 29/02** (11) **978** (13) **A2**
(21) P20000062 (22) 04.07.2000
(41) 22.09.2000
(72) Գարրի Բերբերյան (AM), Սուրեն Հովսեփյան (AM), Ռուբեն Հակոբյան (AM), Արմեն Մաիլյան (AM), Լեւոն Զաքարյան (AM), Կարեն Դարչինյան (AM), Վարդան Հովսեփյան (AM)
(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) **Հիդրոգեներատորի ստատորի փաթույթը հովացնող հոսքի ախտորոշման սարք**

(57) Գյուտը վերաբերում է չափիչ տեխնիկայի բնագավառին եւ կարող է կիրառվել հզոր հիդրոգեներատորների ջրային հովացմամբ գործող ստատորային փաթույթների տարրական հաղորդիչներում՝ խցանումների հայտնաբերման, տեղայնացման եւ միջին տրամագծերի որոշման համար:

Խողովակաշարում գոյացած խցանման տեղայնացման համար եւ դրա միջին տրամագիծը բավականին բարձր ճշտությամբ որոշելու նպատակով սարքն ունի տարրական հաղորդիչների յուրաքանչյուր խմբի մուտքում եւ ելքում տեղադրված անդրաձայնային ալիքների ճառագայթիչներ եւ ընդունիչներ: Ընդունիչների ելքերը միացված են բազմուղի կոմուտատորին, որի ելքը իմպուլսների սպեկտրի անալիզատորի միջոցով միացված է հսկման եւ ցուցանշման հանգույցներին: 1 նկ.:

---

(51)[7] **G05B 19/02** (11) **979** (13) **A2**
H02P 8/00
(21) P20000049 (22) 12.06.2000
(41) 08.08.2000
(72) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(71) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(73) Վահան Հարությունյան, Երեւան, Չարենցի 7, բն. 35 (AM), Աշոտ Մուրադյան, Երեւան, Դեմիրճյան 40, բն. 28 (AM)
(54) **Եռաֆազ քայլային շարժիչի բազմառեժիմ ղեկավարման սարք**

(57) Գյուտը վերաբերում է ավտոմատիկայի եւ էլեկտրատեխնիկայի բնագավառներին եւ կարող է կիրառվել ակտիվ, պասիվ եւ հիբրիդային ռոտորներով եռաֆազ քայլային շարժիչների բազմառեժիմային ղեկավարման համար ռոբոտների ծրագրային սարքերի էլեկտրական հաղորդակներում:

Սարքն ունի ուժային մասի առաջին եւ երկրորդ՝ միմյանց հակառակ բեւեռականությամբ սնուցման աղբյուրներ, տրամաբանական մասի սնուցման աղբյուր, առաջին եւ երկրորդ խմբերի հզորության ուժեղացուցիչներ, առաջին եւ երկրորդ խմբերի բազմախառնիչներ, ազդանշանների հաշվիչ ու ԿԱՄ-ՈՉ տրամաբանական տարրեր: Գյուտի համաձայն, սարքը լրացուցիչ ունի առաջին եւ երկրորդ 2ԵՎ-2ԵՎ-ԿԱՄ տրամաբանական տարրեր եւ փաթույթների փոխանջատման ռեժիմի առաջադրման գծալարեր:

Առաջարկվող սարքն ապահովում է փաթույթների փոխանջատման բազմազան ռեժիմներ (6 միաբեւեռ եւ 7 երկբեւեռ՝ փաթույթների միացման «աստղ» ընդհանուր զրոյով սխեմայի դեպքում, 7 երկբեւեռ՝ «աստղ» առանց ընդհանուր զրոյի սխեմայի դեպքում եւ 7 երկբեւեռ՝ «եռանկյուն» սխեմայի դեպքում): 5 նկ.:

---

(51)[7] **G05B 19/40** (11) **980** (13) **A2**
H02P 8/00
(21) P20000086 (22) 06.09.2000
(41) 20.10.2000
(72) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(71) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(73) Վահան Հարությունյան, Երեւան, Չարենցի 7, բն. 35 (AM), Աշոտ Մուրադյան, Երեւան, Դեմիրճյան 40, բն. 28 (AM)
(54) **Եռաֆազ եւ քառաֆազ քայլային շարժիչների ծրագրային ղեկավարման սարք**

(57) Գյուտը վերաբերում է ավտոմատիկայի եւ էլեկտրատեխնիկայի բնագավառներին եւ կարող է կիրառվել ակտիվ, պասիվ եւ հիբրիդային ռոտորներով ինչպես եռաֆազ, այնպես էլ քառաֆազ քայլային շարժիչների ծրագրային ղեկավարման համար, ռոբոտների, ծրագրային ղեկավարմամբ հաստոցների եւ հաշվիչ մեքենաների ծայրամասային սարքերի էլեկտրական հաղորդակներում:

Սարքն ունի չորս բազմախառնիչ, ազդանշանների երկակի շարժափոխ երեքկարգանի հաշվիչ,

տրամաբանական 2 ԿԱՄ, 3 ԵՎ տարրեր եւ ինվերտոր, փոխանջատման ռեժիմի առաջադրման գծալարեր, առաջին եւ երկրորդ խմբերի հզորության ուժեղարարներ, առաջին եւ երկրորդ ուժային մասի սնուցման աղբյուրներ, տրամաբանական ՈՉ եւ ԵՎ տարրեր:

Սարքը ապահովում է փաթույթների փոխանջատման 32 բազմազան ռեժիմներ, այսինքն՝ 12 ռեժիմ եռաֆազ քայլային շարժիչի ղեկավարման համար եւ 20 ռեժիմ քառաֆազ քայլային շարժիչի ղեկավարման համար: 7 նկ.:

---

(51)[7] **G05B 19/40** (11) **981** (13) **A2**
H02P 8/00
(21) P20000087 (22) 06.09.2000
(41) 20.10.2000
(72) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(71) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(73) Վահան Հարությունյան (AM), Երեւան, Չարենցի 7, բն. 35 (AM), Աշոտ Մուրադյան, Երեւան, Դեմիրճյան 40, բն. 28 (AM)

(54) **m ֆազային քայլային շարժիչի բազմառեժիմ ղեկավարման սարք**

(57) Գյուտը վերաբերում է ավտոմատիկայի եւ էլեկտրատեխնիկայի բնագավառներին եւ կարող է կիրառվել ակտիվ, պասիվ եւ հիբրիդային ռոտորներով 3-ից մինչեւ m-ֆազ ունեցող ցանկացած քայլային շարժիչի բազմառեժիմ ղեկավարման համար, ռոբոտների, ծրագրային ղեկավարմամբ հաստոցների եւ հաշվիչ մեքենաների ծայրամասային սարքերում կատարող մեխանիզմների էլեկտրական հաղորդակներում:

Սարքն ունի դրական եւ բացասական բեւեռականություններով սնուցման աղբյուրներ, առաջին եւ երկրորդ խմբերի հզորության ուժեղացուցիչներ, m տեղեկատվական մուտքերով բազմախառնիչներ, քայլային շարժիչի փաթույթների փոխանջատման բեւեռականության եւ տակտայնության առաջադրման գծալարեր, քայլային փաթույթների փոխանջատման ռեժիմների առաջադրման գծալարեր, ազդանշանների երկակի շարժափոխ հաշվիչ, տրամաբանական տարրեր:

Սարքը պարզ է եւ օժտված է լայն ֆունկցիոնալ հնարավորություններով: Ընդհանուր առմամբ, առաջարկվող սարքը m ֆազային քայլային շարժիչի փաթույթները համապատասխան հզորության ուժեղարարի բոլոր հնարավոր սխեմաներով միացման դեպքում ապահովում է 4(2m-3) զանազան միաբեւեռ եւ երկբեւեռ փոխանջատման ռեժիմ: 13 նկ.:

---

(51)[7] **G05B 19/40** (11) **982** (13) **A2**
H02P 8/00
(21) P20000088 (22) 06.09.2000
(41) 20.10.2000
(72) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(71) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(73) Վահան Հարությունյան, Երեւան, Չարենցի 7, բն. 35 (AM), Աշոտ Մուրադյան, Երեւան, Դեմիրճյան 40, բն. 28 (AM)

(54) **Եռաֆազ եւ քառաֆազ քայլային շարժիչների բազմառեժիմ ղեկավարման սարք**

(57) Գյուտը վերաբերում է ավտոմատիկայի եւ էլեկտրատեխնիկայի բնագավառներին եւ կարող է կիրառվել ակտիվ, պասիվ եւ հիբրիդային ռոտորներով ինչպես եռաֆազ, այնպես էլ քառաֆազ քայլային շարժիչների բազմառեժիմ ղեկավարման համար, ռոբոտների, ծրագրային ղեկավարմամբ հաստոցների եւ հաշվիչ մեքենաների ծայրամասային սարքերի էլեկտրական հաղորդակներում:

Սարքն ունի ուժային մասի առաջին եւ երկրորդ՝ իրար հակառակ բեւեռականությամբ սնուցման աղբյուրներ, տրամաբանական մասի սնուցման աղբյուր, առաջին եւ երկրորդ հզորության ուժեղարարներ, առաջին եւ երկրորդ խմբերի բազմախառնիչներ՝ «4-ից 1-ը» կառուցվածքով եւ ընտրման համապատասխան մուտքերով, ազդանշանների չորս շարժափոխ երկակի հաշվիչ, ինվերտոր տրամաբանական տարրեր 2 ԵՎ-ՈՉ, 2 ԵՎ, 2 ԿԱՄ անհամարժեքության տարրեր, տրամաբանական տարր 3 ԵՎ, առաջին եւ երկրորդ բազմախառնիչներ «2-ից 1-ը» կառուցվածքով, փաթույթների փոխանջատման ռեժիմի առաջադրման առաջին եւ երկրորդ գծալարեր, երկրորդ խմբի «4-ից 1-ը» կառուցվածքով բազմախառնիչների ընտրման գծալար: Սարքը լրացուցիչ ունի առաջին եւ երկրորդ էլեկտրական կոմուտատորներ եւ փաթույթների փոխանջատման ռեժիմի առաջադրման չորս գծալար:

Սարքը ապահովում է փաթույթների փոխանջատման 53 բազմազան ռեժիմ, այսինքն՝ 24 ռեժիմ եռաֆազ քայլային շարժիչի ղեկավարման համար եւ 29 ռեժիմ քառաֆազ քայլային շարժիչի ղեկավարման համար: 7 նկ.:

---

(51)[7] **H01J 29/24** (11) **983** (13) **A2**
(21) P20000006 (22) 03.02.2000
(41) 22.09.2000
(72) Գրիգոր Ավետիսյան (AM)
(71) Գրիգոր Ավետիսյան (AM)
(73) Գրիգոր Ավետիսյան, Երեւան, Դավթաշեն 1-13, բն. 30 (AM)

(54) **Լյումինեսցենտային շերտի տակդիր**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկային եւ կարող է կիրառվել բոլոր այն բնագավառներում, որտեղ օգտագործվում են լյումինեսցենտային եւ ֆլուորեսցենտային լուսարձակման երեւույթները, մասնավորապես՝ լյումինեսցենտային լուսավորող սարքերում:

Գյուտի էությունն այն է, որ լյումինեսցենտային շերտի տակդիրի մակերեւույթը ձեւավոր է՝ ունի ալի-

քաձեւ, բրգաձեւ, կոնաձեւ կամ այլ անհավասարություններ: Ընդ որում, տակդիրի մակերեւույթի անհավասարությունների բարձրությունը ավելի մեծ է լյումինաֆորային նյութի շերտի հաստությունից:

Առաջարկված տակդիրներն ուժեղացնում են լյումինաֆորային նյութով պատված մակերեւույթների լուսարձակումը: 1 նկ.:

---

(51)[7] **H01L 21/18** (11) **984** (13) **A2**
(21) P20000063 (22) 10.07.2000
(41) 22.09.2000
(72) Գագիկ Այվազյան (AM), Արմեն Շաբոյան(AM)
(71) Գագիկ Այվազյան (AM), Արմեն Շաբոյան(AM)
(73) Գագիկ Այվազյան, Երեւան, Ավան, Վարուժանի թմ. 10/19 (AM), Արմեն Շաբոյան, Երեւան, Կորեական 14 (AM)
(54) **Սիլիցիումային հզոր տրանզիստորային կառուցվածքների պատրաստման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է ուժային կիսահաղորդչային տեխնիկային:

Սիլիցիումային հզոր տրանզիստորային կառուցվածքների պատրաստման եղանակում n- սիլիցիումային հարթակի հակառակ կողմում, էպիտաքսիալ շերտի աճեցումից առաջ, անոդային խածատման մեթոդով ձեւավորում են 1,4-1,6/սմ^3 ծավալային խտությամբ եւ 10-15մկմ խորությամբ ծակոտկեն սիլիցիումի շերտ:

Եղանակը բարելավում է կառուցվածքների էլեկտրաֆիզիկական պարամետրերը եւ ապահովում մեծ արտադրողականություն: 5 նկ.:

---

(51)[7] **H01L 21/66** (11) **985** (13) **A2**
G01R 31/26
(21) P20000060 (22) 04.07.2000
(41) 22.09.2000
(72) Գագիկ Այվազյան (AM), Արամ Վարդանյան (AM), Գագիկ Մակարյան (AM)
(71) Գագիկ Այվազյան (AM), Արամ Վարդանյան (AM), Գագիկ Մակարյան (AM)
(73) Գագիկ Այվազյան, Երեւան, Ավան, Վարուժանի թմ. 10/19 (AM), Արամ Վարդանյան, Երեւան, Չեխովի 15/30 (AM), Գագիկ Մակարյան, Երեւան, Նորքի այգիներ 257 (AM)
(54) **Սիլիցիումային P-n անցման խորության որոշման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է կիսահաղորդչային տեխնոլոգիային եւ կարող է կիրառվել սիլիցիումային էպիտաքսիալ եւ դիֆուզիային P-n անցումների սահմանագծի հայտածման եւ խորության որոշման համար:

Սիլիցիումային P-n անցման խորության որոշման եղանակում մակերեւույթի անոդային մշակումն իրականացնում են մեխանիկական բացումից առաջ P տիպի սիլիցիումում ծակոտկեն սիլիցիումի առաջացման վոլտ-ստատիկ ռեժիմում եւ մշակումն ընդհատում, երբ անոդային հոսանքը հասնում է 0-ի:

Բարձրացվում է ճշգրտությունն ու նվազեցվում աշխատատարությունը:

---

(51)[7] **H02P 5/16** (11) **986** (13) **A2**
(21) 99053 (22) 02.06.1999
(41) 08.08.2000
(72) Վարդգես Վարպետյան (AM), Հակոբ Մոմջյան (AM)
(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) **Հաճախային կառավարման ասինքրոն էլեկտրաշարժաբեր**
(57) Գյուտը վերաբերում է էլեկտրամեխանիկային եւ կարող է կիրառվել արագության սահուն կարգավորում պահանջող մեխանիզմների շարժաբեր համակարգերում:

Լայն արդյունաբերական արտադրություն ունեցող, հաճախային կառավարման ասինքրոն էլեկտրաշարժաբերների արագագործությունը եւ դինամիկական կայունությունը մեծացնելու նպատակով համակարգում կիրառված հետադարձ կապերի արդյունարար ազդանշանը մատուցվում է կառավարվող ուղղիչի կառավարման համակարգի մուտքին, իսկ ինվերտորի կառավարման համակարգի մուտքին մատուցվում է ինվերտորի մուտքային ազդանշանը, ինչը մեծացնում է շարժիչի զարգացրած էլեկտրամագնիսական մոմենտի փոփոխման արագությունը:

Առաջարկված լուծումը համակարգային է եւ կիրառելի է ինչպես անմիջական հաճախականության կերպափոխիչ պարունակող, այնպես էլ հաստատուն հոսանքի միջանկյալ օղակով հաճախության կերպափոխիչ պարունակող ասինքրոն էլեկտրաշարժաբերներում, որոնք կարող են ունենալ ե՛ւ էլեկտրոնային ապարատային իրագործումներ, ե՛ւ թվածրագրային կառավարում: 1 նկ.:

---

(51)[7] **H02P 5/16** (11) **987** (13) **A2**
(21) 99116 (22) 26.10.1999
(41) 08.08.2000
(72) Վարդգես Վարպետյան (AM), Հակոբ Մոմջյան (AM)
(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) **Ավտոմատ հաճախային կառավարման ասինքրոն էլեկտրաշարժաբեր**
(57) Գյուտը վերաբերում է էլեկտրամեխանիկային եւ կարող է կիրառվել արագության սահուն կարգա-

վորում պահանջող էլեկտրաշարժաբեր համակարգերում:

Ասինքրոն շարժիչը սնվում է ուղղիչով ուղղված եւ ինվերտորի միջոցով կերպափոխված կարգավորվող հաճախության փոփոխական լարումով:

Ինվերտորի կառավարման համակարգը կառավարման ազդանշան է ստանում լարման տվիչից, որը միացված է ուղղիչի ելքին, իսկ համակարգի մուտքային կառավարման ազդանշանը տրվում է ուղղիչի կառավարման համակարգի մուտքին:

Համակարգում կիրառված բոլոր հետադարձ կապերի համար տեղադրված են անհատական կոնտուրային կարգավորիչներ:

Բարելավվում են համակարգի ստատիկական եւ դինամիկական ցուցանիշները: 1 նկ.:

---

(51)[7] **H02P 7/74** (11) **988** (13) **A2**
(21) P20000026 (22) 05.04.2000
(41) 08.08.2000
(72) Վարդգես Վարպետյան (AM)
(71) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (AM)
(73) Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, Երեւան, Տերյան 105 (AM)
(54) **Շարժաբերի սինքրոն պտտման համակարգ**
(57) Գյուտը վերաբերում է էլեկտրամեխանիկային եւ կարող է կիրառվել որպես իրար հետ մեխանիկական կապ չունեցող մի քանի մեխանիզմների համաձայնեցված շարժում պահանջող ագրեգատների բանեցման համակարգ:

Շարժաբերի սինքրոն պտտման համակարգի յուրաքանչյուր մեխանիզմի լիսեռին տեղադրված են մեկական նույնատիպ աշխատանքային շարժիչներ, որոնց լիսեռներն ամրակցված են մեկական նույնատիպ ֆազային ռոտորով օժանդակ ասինքրոն էլեկտրական մեքենաների լիսեռներին, որոնց ստատորների եռաֆազ փաթույթները միացված են միեւնույն արդյունաբերական ցանցին, իսկ ռոտորների եռաֆազ փաթույթները միացված են իրար հանդիպակաց: Արտաքին խոտորումների ազդեցությունից լիսեռների դիրքերի սպասվող անհամաձայնությունը կոմպենսացվում է օժանդակ ասինքրոն մեքենաների մագնիսական դաշտի տարածական դիրքի կառավարման փակ համակարգի միջոցով (ավտոմատ ձեւով):

Առաջարկվող համակարգում լիսեռների դիրքերի կառավարման ստատիկական սխալը կարող է հասնել զրոյի: 1նկ.:

---

(51)[7] **H02P 8/00** (11) **989** (13) **A2**
(21) P20000053 (22) 19.06.2000
(41) 08.08.2000
(72) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(71) Վահան Հարությունյան (AM), Աշոտ Մուրադյան (AM)
(73) Վահան Հարությունյան, Երեւան, Չարենցի 7, բն. 35 (AM), Աշոտ Մուրադյան, Երեւան, Դեմիրճյան 40, բն. 28 (AM)
(54) **Քառաֆազ քայլային շարժիչի բազմառեժիմ ղեկավարման սարք**
(57) Գյուտը վերաբերում է ավտոմատիկայի եւ էլեկտրատեխնիկայի բնագավառներին եւ կարող է կիրառվել ակտիվ, պասիվ եւ հիբրիդային ռոտորներով քառաֆազ քայլային շարժիչների բազմառեժիմային ղեկավարման ռոբոտների, ծրագրային ղեկավարմամբ հաստոցների եւ հաշվիչ մեքենաների ծայրամասային սարքերի էլեկտրական հաղորդակներում:

Սարքն ունի ուժային մասի առաջին եւ երկրորդ՝ միմյանց հակառակ բեւեռականությամբ սնուցման աղբյուրներ, տրամաբանական մասի սնուցման աղբյուր, առաջին եւ երկրորդ խմբերի հզորության ուժեղացուցիչներ, առաջին եւ երկրորդ խմբերի բազմախառնիչներ, ազդանշանների երկակի շարժափոխ չորսկարգանի հաշվիչ, տրամաբանական տարրեր՝ 2ԵՎ-ՈՉ եւ 2ԿԱՄ, փաթույթների փոխանջատման ռեժիմի առաջադրման գծալարեր: Սարքը լրացուցիչ ունի առաջին եւ երկրորդ երկու տեղեկատվական մուտքերով բազմախառնիչներ եւ նրանց ընտրման եւ ղեկավարման համապատասխան մուտքերին միացված փաթույթների փոխանջատման ռեժիմի առաջադրման գծալարեր:

Սարքն ապահովում է փաթույթների փոխանջատման 29 բազմազան ռեժիմ (5 միաբեւեռ եւ 8 երկբեւեռ՝ փաթույթների միացման «աստղ» ընդհանուր զրոյով սխեմայի դեպքում, 8 երկբեւեռ՝ «աստղ» առանց ընդհանուր զրոյի սխեմայի դեպքում եւ 8 երկբեւեռ՝ «քառանկյուն» սխեմայի դեպքում): 5 նկ.:

---

(51)[7] **H04B 7/17** (11) **990** (13) **A2**
H04B 7/216
(21) P20000048 (22) 05.06.2000
(41) 22.09.2000
(72) Ռազմիկ Հակոբյան (AM)
(71) Ռազմիկ Հակոբյան (AM)
(73) Ռազմիկ Հակոբյան, Երեւան, Բաբայան 14, բն.27 (AM)
(54) **Ոչ սինքրոն ռեժիմում ինֆորմացիայի հաղորդման եւ ընդունման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է ռադիոկապի, հեռախոսակապի, ռադիոէլեկտրոնիկայի եւ ինֆորմատիկայի բնագավառներին:

Ըստ եղանակի, յուրաքանչյուր աբոնենտի հատկացվում է հասցե եւ ինֆորմացիայի հաղորդման համար որոշակի ժամանակահատված: Հաղորդող աբոնենտը տակտային հաճախությամբ հաղորդում է ընդունող աբոնենտի հասցեն եւ ինֆորմացիան:

Ազդանշանի մշակման ալգորիթմն ընտրված է այնպես, որ հնարավորություն է ընձեռում բազմաթիվ ինքնավար աբոնենտների միջեւ իրականացնել միեւնույն հաճախային ընդգրկույթում միաժամա-

նակյա կապ՝ ոչ սինքրոն ռեժիմում, չխանգարելով միմյանց, ապահովել կապի միջոցների անխափան աշխատանքը արտաքին ոչ միտումնավոր եւ միտումնավոր ստեղծված աղմուկների առկայության պայմաններում, ապահովել հաղորդած ինֆորմացիայի գաղտնիությունը, բարելավել մթնոլորտի էկոլոգիական վիճակը: 2 նկ.:

---

(51) [7] **H05B 06/10** (11) **991** (13) **A2**
(21) P20000028 (22) 11.04.2000
(41) 22.09.2000
(72) Աշոտ Հարությունյան (AM)
(71) Աշոտ Հարությունյան (AM)
(73) Աշոտ Հարությունյան, Երեւան, Շիրվանզադեի 4, բն. 6 (AM)

(54) **Հեղուկ եւ գազային նյութերի տաքացման սարք**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրատեխնիկայի բնագավառին եւ կարող է կիրառվել հոսող հեղուկ ու գազային նյութերի ինդուկցիոն տաքացման համար, մասնավորապես բնակելի շենքերում:

Սարքն ունի մագնիսական միջուկով երեք ինդուկտոր, որոնք տեղակայված են միմյանց նկատմամբ 120°անկյունով, եւ նրանց միջեւ տեղադրված էլեկտրատեխնիկական պողպատից ներբան, որի ակոսներում կան կարճ միակցված փաթույթներ: Առաջարկվող սարքը կարող է ունենալ նաեւ հարթ ներբան: Ինդուկտորի մագնիսամիջուկի եւ ներբանի միջեւ օդային բացակը նվազագույնն է եւ գործնականորեն բացակայում է: 3 նկ.:

ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
U օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
45 օգտակար մոդելի արտոնագի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 ռեֆերատը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51)[7] **A61D 15/00** (11) **36** (13) **U**
(21) 99056 (22) 15.06.1999
(72) Հեկտոր Հարությունյան (AM), Ալբերտ Վարդանյան (AM), Սամվել Օհանջանյան (AM)
(71) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա (AM)
(73) Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Երեւան, Տերյան 74 (AM)
(54) **Կճղակների եւ սմբակների մշակման բազմագործ սարք**
(57) Օգտակար մոդելը վերաբերում է անասնաբուժությանը, մասնավորապես՝ վիրաբուժական գործիքներին:

Կճղակների եւ սմբակների մշակման բազմագործ սարքը բաղկացած է ուղղանկյուն հատվածքով ձողից, որի մի ծայրին ամրացված է բռնակ, իսկ մյուս ծայրն ունի դուրի սրվածք: Ձողի կողմերից մեկի միջնամասում կատարված է թորբուի դաջվածք:

Բազմագործ սարքն ունի փոխարինելի գործիքներ՝ կտրիչային միակողմանի սրվածքով շեղը եւ նրբասղոց, որոնք ձողին ամրացվում են պտուտակներով եւ մանեկներով: 1 նկ.:

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ
ТОВАРНЫЕ ЗНАКИ

Ապրանքային եւ սպասարկման նշաններին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի

600	*նախկին ԽՍՀՄ վկայականի համարը եւ հայտի ներկայացման թվականը*
111	*գրանցման հերթական համարը*
151	*գրանցման թվականը*
181	*գրանցման գործողության ենթադրյալ ավարտը*
210	*հայտի համարը*
220	*հայտի ներկայացման թվականը*
230	*ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը*
310	*առաջին հայտի համարը*
320	*կոնվենցիայով առաջնության թվականը*
330	*երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
510	*ապրանքների եւ (կամ) ծառայությունների ցանկը*
511	*դասերը ըստ նշանների գրանցման ապրանքների եւ ծառայությունների միջազգային դասակարգման (Նիցայի դասակարգում)*
526	*չպաշտպանվող տարրեր*
540	*ապրանքային նշանի պատկերը*
551	*կոլեկտիվ նշան*
554	*ծավալային նշան*
591	*գույնը եւ գունային համակցությունը*
646	*իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը եւ թվականը*
730	*նշանի սեփականատերը, հասցեն, երկրի կոդը*
740	*արտոնագրային հավատարմատար*

Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին

(210) **990538** (111) **5551**
(220) **10.06.1999** (151) **14.11.2000**
(181) **10.06.2009**
(730) "Երեւանի կոնյակի գործարան" ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ
(540)

ՍՊԱՐԱՊԵՏ

(511) (510)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

---

(210) **990891** (111) **5552**
(220) **20.09.1999** (151) **14.11.2000**
(181) **20.09.2009**
(730) "Երեւանի կոնյակի գործարան" ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ
(540)

(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, դեղին, շագանակագույն, արծաթագույն, վարդագույն, երկնագույն, կապույտ, թանաքագույն, դարչնագույն, կարմիր, կանաչ, սեւ եւ սպիտակ գունային համակցությամբ:
(511) (510)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

---

(210) **990892** (111) **5553**
(220) **20.09.1999** (151) **14.11.2000**
(181) **20.09.2009**
(730) "Երեւանի կոնյակի գործարան" ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ
(540)

(526) Բացի "ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ" եւ "VASPURAKAN" բառերից մնացած գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, դեղին, շագանակագույն, արծաթագույն, նարնջագույն, երկնագույն, թանաքագույն, կապույտ, դարչնագույն, սպիտակ եւ սեւ գունային համակցությամբ:
(511) (510)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

---

(210) **990893** (111) **5554**
(220) **20.09.1999** (151) **14.11.2000**
(181) **20.09.2009**

(730) “Երեւանի կոնյակի գործարան” ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ

(540)

(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:

(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, դեղին, շագանակագույն, կապույտ, դարչնագույն, սեւ եւ սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

---

(210) **990894** (111) **5555**

(220) **20.09.1999** (151) **14.11.2000**

(181) **20.09.2009**

(730) “Երեւանի կոնյակի գործարան” ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ

(540)

(526) Բացի “ԱԽԹԱՄԱՐ” եւ “AKHTAMAR” բառերից մնացած գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:

(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, դեղին, շագանակագույն, երկնագույն, կապույտ, դարչնագույն, նարնջագույն, արծաթագույն, սեւ եւ սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

---

(210) **990895** (111) **5556**

(220) **20.09.1999** (151) **14.11.2000**

(181) **20.09.2009**

(730) “Երեւանի կոնյակի գործարան” ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ

(540)

(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:

(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, դեղին, շագանակագույն, կապույտ, դարչնագույն, սեւ եւ սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)

դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

---

(210) **990897** (111) **5557**

(220) **20.09.1999** (151) **14.11.2000**

(181) **20.09.2009**

(730) “Երեւանի կոնյակի գործարան” ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ

(540)

(526) Բացի "ՏՈՆԱԿԱՆ" եւ "PRAZDNICHNY" բառերից մնացած գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, դեղին, շագանակագույն, վարդագույն, երկնագույն, կապույտ, դարչնագույն, մանուշակագույն, կանաչ, սեւ եւ սպիտակ գունային համակցությամբ:
(511) (510)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

---

(210) **990898** (111) **5558**
(220) **20.09.1999** (151) **14.11.2000**
(181) **20.09.2009**
(730) "Երեւանի կոնյակի գործարան" ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ
(540)

(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, դեղին, շագանակագույն, երկնագույն, կապույտ, դարչնագույն, կանաչ, արծաթագույն, կարմիր, նարնջագույն, սեւ եւ սպիտակ գունային համակցությամբ:
(511) (510)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ:

---

(210) **990900** (111) **5559**
(220) **20.09.1999** (151) **14.11.2000**
(181) **20.09.2009**
(730) "Երեւանի կոնյակի գործարան" ՓԲԸ, Երեւան, Իսակովի պող. 2, ԱՄ
(540)

(526) Բացի "ԱԽԹԱՄԱՐ" եւ "AXTAMAP" բառերից մնացած գրառումներն ինքնուրույն պահպանության ենթակա չեն:
